Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

2527

Համառօտ
նոր
Քերականութիւն

491.99-5
Գ-34

Կ. Պոլիս
1871

2010

2002

491.99-5
Գ-34

# ՀԱՄԱՌՕՏ
# ՆՈՐ
# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ա. Մ. Վ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՔՆՆՈՒԱԾ ԵՒ ՍՐԲԱԳՐՈՒԱԾ



Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՓԱՓԵԱՆ
— 1871 —

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ԳԷՈՐԳԱՅ

ԱԶԳԱՍԷՐ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Տ. Տ. ԵՍԱՅԵԱՅ

ԱՌԱՔԵԼԱՇԱՒԻՂ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ 56642-ան

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ ԽՐԻՄԵԱՆ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

2119-70

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Աս համառօտ Քերականութիւնը առաջին, երկրորդ եւ երրորդ մասերուն մէջ հայերէն լեզուին խիստ կարեւոր սկզբունքներն ու կանոնները կը պարունակէ, եւ բաւական է անոնց համար՝ որոնց դիտումը հայերէն հասկնալ, լուծել եւ փոքր 'ի շատէ գրել է ։ Անձնանուէր կոչուած խիստ արդիւնաւոր ընկերութեան միջոցովը հայերէն լեզուին ուսումը ընդհանուր տարածուելու վրայ ըլլալով, գլխաւորաբար յիշեալ ընկերութեան ծառայութիւն մը մատուցած ըլլալու համար, աս Քերականութեան յօրինմանն ու տպագրութեանն առաւելապէս խնամ տարուեցաւ ։ Եւ որպէս զի յիշեալ ընկերութեան նպատակին աւելի աղէկ ծառայէ, նոյն գործին մէջ փորձառու եղող անձանց դիտողութիւններն ու խորհուրդն առնուած, ու անոնց համեմատ չափաւորուած է ։

Բաց 'ի յիշեալ ընկերութեան աշակերտներէն, աս համառօտ Քերականութեան մէջ դպրոցաց Քերականութեան ստորին դասերուն ալ յարմարութիւնը դիտուած է ։

Քերականութեանս համառօտութեանը հետ դիւրիմացութիւնը, ամենէն կարեւոր կանոններուն ամբողջութիւնը, գնոյն ալ մեծ չափաւորութիւնը այն յատկութիւններն են որ այսպիսի նախնական դասագրքէ մը կը պահանջուին ։

# ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ

# ՀԱՅԵՐԷՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

## ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

### ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻ

1. Քերականութիւնն ուղիղ խօսիլ և ուղիղ գրել կը սորվեցնէ։

2. Խօսքը բառերէ կը շինուի։

3. Հայերէն լեզուին բառերն ութը կարգի կը բաժնուին, և Մասունք բանի կը կոչուին, և են՝ Գոյական, Ածական, Դերանուն, Նախդիր, կամ Նախադրութիւն, Բայ, Մակբայ, Շաղկապ, և Ձայնարկութիւն։

## ԳԼՈՒԽ Ա.

### ԳՈՅԱԿԱՆ

4. Գոյականն՝ անձ մը և իր մը կամ երևոյթ մը կը ցուցնէ. զոր օրինակ, հայր, մայր, հաց, քաղաք, հոգի, իմաստութիւն։

5. Գոյականը երկու փոփոխութիւն կ'ունենայ, Թիւ և Հոլով։

6. Թիւը երկու է, Եզակի և Յոգնակի։

7. Եզակին գոյականին նշանակած բանին մէկ հատ ըլլալը կը ցուցնէ. զոր օրինակ, մարդ, քաղաք, գետ, կը նշանակեն մէկ մարդ, մէկ քաղաք, մէկ գետ։

8. Յոգնակին գոյականին նշանակած բանին մէկէ աւելի ըլլալը կը ցուցնէ. զոր օրինակ, մարդք, քաղաքք, գետք. մարդեր, քաղաքներ, գետեր, կը նշանակեն. այսինքն՝ մէկէ աւելի մարդ, մէկէ աւելի քաղաք, մէկէ աւելի գետ։

9. Յոգնակին վերջաւորութիւնը միշտ եզակիէն տարբեր է։

10. Հոլով՝ անունի մը վերջաւորութեան փոխումն է։

11. Հայերէնի մէջ հոլովը վեց է. Ուղղական, Սեռական, Տրական, Հայցական, Բացառական, Գործիական։

12. Հայերէնի մէջ ամեն գոյականի վերջը մի և նոյն կերպով չի փոխուիր, այլ տասնուերեք կերպով։

13. Աս տասնուերկու կերպ փոփոխութեանց հոլովմունք կ'ըսուի։

14. Տասնուերկու հոլովմունքէն զատ որոնք կանոնաւոր են, քանի մը հատ ալ անկանոն հոլովմունք կան։

# ՏԱՍՆԵՐԿՈՒ ԿԱՆՈՆԱՒՈՐ ՀՈԼՈՎՄՈՒՆՔ

## Ա. ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի.

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղական. | բան. | խօսք. | սէօզ. |
| Սեռական. | բան-ի. | խօսքին. | սէօզիւն. |
| Տրական. | բան-ի. | խօսքին. | սէօզէ. |
| Հայցական. | զբան. | խօսքը. | սէօզիւ. |
| Բացառական. | 'ի բան-է. | խօսքէն. | սէօզտէն. |
| Գործիական. | բան-իւ. | խօսքով. | սէօզլէր իլէ. |

Յոգնակի.

| | | | |
|---|---|---|---|
| Ուղ. | բան-ք. | խօսքեր. | սէօզլէր. |
| Սեռ. | բան-ից. | խօսքերուն. | սէօզլէրին. |
| Տր. | բան-ից. | խօսքերուն. | սէօզլէրէ. |
| Հայց. | զբան-ս. | խօսքերը. | սէօզլէրի. |
| Բաց. | 'ի բան-ից. | խօսքերէն. | սէօզլէրտէն. |
| Գործ. | բան-իւք. | խօսքերով. | սէօզլէր իլէ. |

Արքայ, յի, յիւ. Գիծ, գծի, գծիւ.
Բանաս, տի, տիւ. Հանդէս, դէսի, դէսիւ:

## Բ. ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | քաղաք. | քաղաք-ք. |
| Ս. | քաղաք-ի. | քաղաք-աց. |
| Տ. | քաղաք-ի. | քաղաք-աց. |
| Հ. | զքաղաք. | զքաղաք-ս. |
| Բ. | 'ի քաղաք-է. | 'ի քաղաք-աց. |
| Գ. | քաղաք-աւ. | քաղաք-օք. |

Աւազան, նի, նաւ. Պարտէզ, տիզի, տիզաւ.
Լեզու, զուի, զուաւ. Որդեակ, դեկի, դեկաւ:

## Գ. ՀՈԼՈՎՈՒՄ.

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ու. | Զգեստ. | Զգեստ-ք. |
| Ս. | Զգեստ-ու. | Զգեստ-ուց. |
| Տ. | Զգեստ-ու. | Զգեստ-ուց. |
| Հ. | զԶգեստ. | զԶգեստ-ս. |
| Բ. | 'ի Զգեստ-է | 'ի Զգեստ-ուց. |
| Գ. | Զգեստ-ու. | Զգեստ-ուք. |

Զարդ, դու, դու. Ծով, ծովու, ծովու.
Զէն, զինու, զինու. Քաղց, ցու, ցու:

## Դ. ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ու. | Գետ. | Գետք |
| Ս. | Գետ-ոյ. | Գետ-ոց. |
| Տ. | Գետ-ոյ. | Գետ-ոց. |
| Հ. | զԳետ. | զԳետ-ս. |
| Բ. | 'ի Գետ-ոյ. | 'ի Գետ-ոց. |
| Գ. | Գետ-ով. | Գետ-ովք. |

Էշ, իշոյ, իշով. Յոյս, յուսոյ, յուսով.
Տէր, րոյ, րով. Ցաւ, ւոյ, ւով:

## Ե. ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի.

| | | | |
|---|---|---|---|
| Ու. | Տրդատ. | Հ. | զՏրդատ. |
| Ս. | Տրդատ-այ. | Բ. | 'ի Տրդատ-այ. |
| Տ. | Տրդատ-այ. | Գ. | Տրդատ-աւ. |

Հայկ, կայ, կաւ. Տիգրան, նայ, նաւ.

## Զ. ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի.

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Հռիփսիմէ. | Հ. | զՀռիփսիմէ. |
| Ս. | Հռիփսիմ-եայ. | Բ. | 'ի Հռիփսիմ-եայ. |
| Տ. | Հռիփսիմ-եայ. | Գ. | Հռիփսիմ-եաւ. |

Եսայի, յեայ, յեաւ. Նունէ, նեայ, նեաւ:

## Է. ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Եկեղեցի. | Եկեղեցի-ք. |
| Ս. | Եկեղեց-ւոյ. | Եկեղեց-եաց. |
| Տ. | Եկեղեց-ւոյ, -ւոջ. | Եկեղեց-եաց. |
| Հ. | զԵկեղեցի. | զԵկեղեցի-ս. |
| Բ. | յԵկեղեց-ւոյ. | յԵկեղեց-եաց. |
| Գ. | Եկեղեց-եաւ. | Եկեղեց-եօք. |

Գինի, նւոյ, նեաւ. Կղզի, զւոյ, զեաւ.
Գօտի, տւոյ, տեաւ. Տեղի, տեղւոյ, տեղեաւ:

## Ը. ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | փոքր. | փոք-ունք. |
| Ս. | փոք-ու. | փոք-ունց. |
| Տ. | փոք-ու. | փոք-ունց. |
| Հ. | զփոքր. | զփոք-ունս. |
| Բ. | 'ի փոք-ուէ. | 'ի փոք-ունց. |
| Գ. | փոք-ումբ, փոք-ու. | փոք-ումբք. |

Բարձր, ձու, ձու. Մանր, նու, նու.
Ծանր, նու, նու. Քաղցր, ցու, ցու:

## Թ. ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Հիմն. | Հիմ-ունք. |
| Ս. | Հիմ-ան. | Հիմ-անց. |
| Տ. | Հիմ-ան. | Հիմ-անց. |
| Հ. | զՀիմն. | զՀիմ-ունս. |
| Բ. | 'ի Հիմ-անէ. | ի Հիմ-անց. |
| Գ. | Հիմ-ամբ. | Հիմ-ամբք. |

Արեգակն, կան, կամբ. Խոստումն, ուման, ումամբ. Դուռն, դրան, դրամբ. Շուրթն, շրթան, շրթամբ:

## Ժ. ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Գառն. | Գառ-ինք. |
| Ս. | Գառ-ին. | Գառ-անց. |
| Տ. | Գառ-ին. | Գառ-անց. |
| Հ. | զԳառն. | զԳառ-ինս. |
| Բ. | 'ի Գառ-անէ. | 'ի Գառ-անց. |
| Գ. | Գառ-ամբ. | Գառ-ամբք. |

Եզն, եզին, եզամբ. Խաշն, խաշին, խաշամբ. Լեառն, լերին, լերամբ. Ձեռն, ռին, ռամբ:

## ԺԱ. ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Նեղութիւն. | Նեղութիւն-ք. |
| Ս. | Նեղութ-եան. | Նեղութ-եանց. |
| Տ. | Նեղութ-եան. | Նեղութ-եանց. |
| Հ. | զՆեղութիւն. | զՆեղութիւն-ս. |
| Բ. | 'ի Նեղութ-ենէ. | 'ի Նեղութ-եանց. |
| Գ. | Նեղութ-եամբ. | Նեղութ-եամբք. |

Բարութիւն, թեան, թեամբ.
Գերութիւն, թեան. թեամբ.
Անկիւն, կեան, կեամբ.
Արիւն, եան, եամբ:

## ԺԲ. ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Ոսկր. | Ոսկ-երք. |
| Ս. | Ոսկ-եր. | Ոսկ-երաց. |
| Տ. | Ոսկ-եր. | Ոսկ-երաց. |
| Հ. | զՈսկր. | զՈսկ-երս. |
| Բ. | յՈսկ-երէ. | յՈսկ-երաց. |
| Գ. | Ոսկ-երբ. | Ոսկ-երօք. |

Դուստր, դստեր, դստերբ. Աստղ, տեղ, տեղբ.
Ուստր, տեր, տերբ. Տարր, րեր, րերբ:

## ԳԻՏԵԼԻՔ

15. Բաղաձայնով վերջաւորուած անուններուն վերջի վանկին է և ու ձայնաւորները, ուղղականէն և հայցականէն զատ, ուրիշ հոլովներուն մէջ կը կորսուին, զոր օրինակ, Գէծ, զգէծ, գծի, 'ի գծէ, գծիւ. գէծք, զգէծս, գծից, 'ի գծից, գծիւք, Խունկ, զխունկ, խնկոյ, 'ի խնկոյ, խնկով. խունկք, զխունկս, խնկոց, 'ի խնկոց, խնկովք:

16. Իսկ եան՝ եի, են՝ էի, ոյն՝ ուի կը փոխուին. զոր օրինակ, Ատեան, զատեան, ատենի, յատենէ, ատենիւ. ատեանք, զատեանս, ատենից, յատենից, ատենիւք. Մէգ, զմէգ,

մէգի · 'ի մէգէ , մէգաւ · մէգք , զմէգս , մէգաց , մէգօք · Գոյն , զգոյն , գունոյ , 'ի գունոյ , գունով · գոյնք , զգոյնս , գունոց , 'ի գունոց , գունովք :

17· Կան Գոյականներ որոնց եզակին չի գործածուիր , զոր օրինակ , Աղօթք , Դժոխք , Կամք , Միտք : Ասոնք Անեզական կը կոչուին :

## ԱՆԿԱՆՈՆ ՀՈԼՈՎՄՈՒՆՔ

| | Ա· ՀՈԼՈՎՈՒՄ | | Բ· ՀՈԼՈՎՈՒՄ | |
|---|---|---|---|---|
| | Եզ. | Յոգ· | Եզ. | Յոգ· |
| Ո· | Այր· | Արք· | Հայր· | Հարք· |
| Ս· | Առն· | Արանց· | Հօր· | Հարց· |
| Տ· | Առն· | Արանց· | Հօր· | Հարց· |
| Հ· | զԱյր· | զԱրս· | զՀայր· | զՀարս· |
| Բ· | յԱռնէ· | յԱրանց· | 'ի Հօրէ· | 'ի Հարց· |
| Գ· | Արամբ· | Արամբք· | Հարբ· | Հարբք· |

Տէր , տեառն , տերամբ · Մայր , մօր , մարբ ·
Տեարք , տերանց , տերամբք · Եղբայր, բօր, բարբ :

| | Գ· ՀՈԼՈՎՈՒՄ | | Դ· ՀՈԼՈՎՈՒՄ | |
|---|---|---|---|---|
| | Եզ. | Յոգ· | Եզ. | Յոգ· |
| Ո· | Քոյր· | Քորք· | Կին· | Կանայք· |
| Ս· | Քեռ· | Քերց· | Կնոջ· | Կանանց· |
| Տ· | Քեռ· | Քերց· | Կնոջ· | Կանանց· |
| Հ· | զՔոյր· | զՔորս· | զԿին· | զԿանայս· |
| Բ· | 'ի Քեռէ· | 'ի Քերց· | 'ի Կնոջէ· | 'ի Կանանց· |
| Գ· | Քերբ· | Քերբք· | Կանամբ· | Կանամբք· |

Հօրաքոյր , քեռ , են · Առնակին , կնոջ , են ·
Մօրաքոյր , քեռ , են · Տիկին , կնոջ , են :

| Ե. ՀՈԼՈՎՈՒՄ | | | Զ. ՀՈԼՈՎՈՒՄ | |
|---|---|---|---|---|
| | Եզ. | Յոգ. | Եզ. | Յոգ. |
| Ո. | Գիւղ. | Գիւղք. | Օր. | Աւուրք. |
| Ս. | Գեղջ. | Գիւղից. | Աւուր. | Աւուրց. |
| Տ. | Գեղջ. | Գիւղից. | Աւուր. | Աւուրց. |
| Հ. | զԳիւղ. | զԳիւղս. | զՕր. | զԱւուրս. |
| Բ. | 'ի Գեղջէ. | 'ի Գիւղից. | յՕրէ. | յԱւուրց. |
| Գ. | Գիւղիւ. | Գիւղիւք. | Աւուրբ. | Աւուրբք. |

| Է. ՀՈԼՈՎՈՒՄ | | | Ը. ՀՈԼՈՎՈՒՄ | |
|---|---|---|---|---|
| | Եզ. | Յոգ. | Եզ. | Յոգ. |
| Ո. | Տիւ. | Տիւք. | Արեւելեայ. | Արեւելեայք. |
| Ս. | Տուընջեան. | | Արեւելւոյ. | Արեւելեայց. |
| Տ. | Տուընջեան. | | Արեւելւոյ. | Արեւելեայց. |
| Հ. | զՏիւ. | զՏիւս. | զԱրեւելեայ. | զԱրեւելեայս. |
| Բ. | 'ի Տուընջենէ. 'ի տուէ. | | յԱրեւելւոյ. | յԱրեւելեայց. |
| Գ. | Տուընջեամբ | | Արեւելեաւ. | Արեւելեօք. |

# ԳԼՈՒԽ Բ.

## ԱԾԱԿԱՆ

18. Ածական կ'ըսուին այն տեսակ բառեր՝ որոնք գոյականին որպիսութիւնը. այսինքն ինչոր ըլլալը, եւ կամ քանակութիւնը, այսինքն՝ թիւը, քանի հատ ըլլալը կը ցուցնեն ։ Զոր օրինակ, կարմիր հանդերձ, երկու հանդերձ ։ կարմիր՝

հանդերձին որպիսութիւնը, երկու՝ քանակութիւնը կը ցուցնեն, ուստի և ածական են։

19. Գոյականն ու ածականը իրարմէ որոշելու դիւրին կերպն է՝ բառին քով բան (շէյ) բառը դնել. եթէ կը յարմարի՝ ան բառն ածական է, եթէ չի յարմարիր՝ բառը գոյական է. զոր օրինակ, չըսուիր՝ մարդ բան, քաղաք բան, տուն բան. ասպա՝ մարդ, քաղաք, տուն, գոյական են. բայց կ'ըսուի, բարի բան, չար բան, մեծ բան. ասպա՝ բարի, չար, մեծ, ածական են։

20. Ածականները սովորաբար գոյականէն ետքը կը դրուին, ու անոր հետ մէկտեղ կը հոլովին, զոր օրինակ, այր իմաստուն. իմաստուն մարդ։

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո. | Այր իմաստուն. | Արք իմաստունք. |
| Ս. | Առն իմաստնոյ. | Արանց իմաստնոց. |
| Տ. | Առն իմաստնոյ. | Արանց իմաստնոց. |
| Հ. | զԱյր իմաստուն. | զԱրս իմաստունս. |
| Բ. | յԱռնէ իմաստնոյ. | յԱրանց իմաստնոց. |
| Գ. | Արամբ իմաստնով. | Արամբք իմաստնովք. |

21. Բայց հարկ կ'ըլլայ շատ անգամ ածականը գոյականէն առաջ դնել, ան ատեն ածականն անփոփոխ կը մնայ, զոր օրինակ.

Հաստատուն բարեկամ. Հաստատուն բարեկամի.
'ի Հաստատուն բարեկամէ. Հաստատուն բարեկամաւ.
Հաստատուն բարեկամք. Հաստատուն բարեկամաց.
Հաստատուն բարեկամօք։

22. Միայն միավանկ ածականները գոյականէն առաջ ալ դրուելու ըլլան, անոր հետ մէկ տեղ կը հոլովին. զոր օրինակ, Մեծ տուն, մեծի տան, մեծաւ տամբ. Նոր օրէնք, նորոց օրինաց. Քաջ այր, քաջի առն, քաջաց արանց. Սուրբ քաղաք, սրբոյ քաղաքի. եւայլն։

23. Գոյականին քանակութիւնը ցուցնող ածականներուն թուական կ'ըսուի։

24. Թուականները երեք տեսակ են. Բացարձակ, Դասական և Անջատական։

25. Ա. Բացարձակները գոյականին թիւը կամ քանի հատ ըլլալը կը ցուցնեն, և գըլխաւորները հետևեալներն են։

Մի, միոյ կամ միոջ, միում, 'ի միոջէ, միով.
Երկու, երկուց, զերկուս, երկուք.
Երեք, երից, զերիս, երիւք.
Չորք, չորից, զչորս, չորիւք.
Հինգ, հնգի, 'ի հնգէ, հնգիւ. Հինգք, հնգից, զհինգս, հնգօք.
Վեց, վեցի, 'ի վեցէ, վեցիւ. Վեցք, վեցից, վեցիւք.
Եօթն, եօթան, յեօթանէ, եօթամբ. Եօթանք, եօթանց, զեօթանս, եօթամբք.
Ութ, ութի, զութ, յութէ, ութիւ. Ութք, ութից, ութիւք.
Ինն, ըննի, յըննէ, ըննիւ. Ինունք, զինունս, ըննից, ըննիւք.
Տասն, տասին, 'ի տասնէ, տասամբ.
Տասունք, տասանց, զտասունս, տասամբք.
Մետասան, նի, նէ, նիւ. նք, նից, նիւք։

Մինչեւ վեշտասան , տասնըվեց , այսպէս կը հոլովի ։

Եօթնեւտասն , սին , սնէ , սամբ . սանք , սանց ,
սանս , սամբք ։

Ութեւտասն , տասնըութը , իննեւտասն , տասնըինը , այսպէս կը հոլովին ։

Քսան , նի , նէ , նիւ . նք , նից , նիւք .
Երեսուն , սնի , սնէ , սնիւ . սունք , սնից , սնիւք .

Մինչեւ իննսուն այսպէս կը հոլովին ։

Հարիւր , հարիւրոյ , րով . րք , րոց , րովք .
Երկերիւր , րիւրոյ , րիւրով . րիւրք , րիւրոց ,
րիւրովք ։

Մինչեւ իննհարիւր այսպէս կը հոլովին ։

Հազար , րի , րէ , րաւ . րք , րաց , րօք .
Բիւր , բու , րէ , րու . րք , րուց , րուք ։

26. Բ. Դասական Թուականները դոյականին չորրորդ կամ հինգերորդ ըլլալը կը ցուցընեն , եւ հետեւեալներն են .

Առաջին , ջնոյ , ջնմէ , ջնով . ջինք , ջնոց , ջնովք ։

Կամ,

Առաջներորդ , դի , դէ , դաւ . դք , դաց , դօք ։
Երկրորդ , դի , դաւ . դք , դաց , դօք ։

27. Ամեն բայարձակ Թուականի վերջը րորդ կամ երորդ մասնիկն աւելցնելով դասական կ'ըլլայ . զոր օրինակ , երրորդ , չորրորդ ,

Հինգերորդ, տասներորդ, քսաներորդ, Հարիւրերորդ, Հազարերորդ, եւայլն, և ամենն ալ Երկրորդին պէս կը հոլովին։

Վերջին, ջնոյ, ջնում, ջնով. ջինք, ջնոց, ջնովք։

28. Գ. Անձներական Թուականները՝ բացարձակներուն վրայ եքին կամ եքեան մասնիկն աւելցնելով կը շինուին, և իրենց ցուցած Թուոյն ամէնն ալ կը նշանակեն. զոր օրինակ, Երկոքին՝ երկուքն ալ ըսել է. Երեքին՝ երեքն ալ. Չորեքին՝ չորսն ալ, Տասնեքին՝ տասն ալ, եւայլն։

29. Անձներական Թուականները միայն յոքնակի են, և հետեւեալ կերպով կը հոլովին։

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո. | Երկոքին, երկոքեան. | Երեքին, երեքեան. |
| Ս. | Երկոցունց. | Երեցունց. |
| Տ. | Երկոցունց. | Երեցունց. |
| Հ. | զԵրկոսին, զերկոսեան. | զԵրեսին, զԵրեսեան. |
| Բ. | յԵրկոցունց. | յԵրեցունց. |
| Գ. | Երկոքումբք. | Երեքումբք. |

30. Ամենեքին, ամենեքեան կը նշանակէ ամէնն ալ, և գոյականաբար միայն կը գործածուի։

31. Թուական ածականներն ալ սովորաբար գոյականէն ետքը դրուելով մէկ տեղ կը հոլովին։

32. Մէ՛ եղակի գոյական կ՚ուզէ. Մնա-

ցած թուականները սովորաբար յոգնակի դի-
յական կ'ուզեն, զոր օրինակ։

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո· | Այր մի· | Արք երկու· |
| Ս· | Առն միոջ· | Արանց երկուց· |
| Տ· | Առն միում· | Արանց երկուց· |
| Հ· | ԶԱյր մի· | ԶԱրս երկուս· |
| Բ· | յԱռնէ միոջէ· | յԱրանց երկուց· |
| Գ· | Արամբ միով· | Արամբք երկուք· |

| | Յոգ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո· | Արք վեց· | Արք քսան· |
| Ս· | Արանց վեցից· | Արանց քսանից· |
| Տ· | Արանց վեցից· | Արանց քսանից· |
| Հ· | ԶԱրս վեց· | ԶԱրս քսան· |
| Բ· | յԱրանց վեցից· | յԱրանց քսանից· |
| Գ· | Արամբք վեցիւք· | Արամբք քսանիւք· |

33· Թուականները, եթէ դոյականէն առաջ դրուին, կրնան մէկտեղ հոլովիլ և չհոլովիլ· զոր օրինակ, հոլովելով՝ Երկու արք· երկուց արանց, չորից զինուորաց· Երեքանց սարկաւագաց· Երկոտասանից առաքելոց։ Չհոլովելով՝ Հինգ հացիւ, քսան արանց, երկոտասան առաքելոց, ևն։

34· Մի՝ առաջ ալ դրուի, կը հոլովի· Մի այր, միոյ առն, միով արամբ։

35· Դասականներն ալ դոյականէն ետքը, երբեմն ալ առաջ դրուելով, միշտ եզակի դոյական կ'ուզեն, ու մէկտեղ կը հոլովին, զոր օրինակ, Օր երկրորդ, աւուր երկրորդի

քօրէ երկրորդէ. կամ, Երկրորդում աւուր, 'ի հինգերորդում ամսեան, եւայլն ։

36. Անձներականները դոյականէն ետքը, երբեմն ալ առաջ դրուելով, միշտ յոքնական դոյական կ'ուզեն, ու մէկտեղ կը հոլովին. զոր օրինակ. Որդիք երկոքեան, որդւոց երկոցունց, որդւովք երկոքումբք. կամ, Երկոքեան որդիք, երկոցունց որդւոց, երկոքումբք որդւովք ։

37. Տեսակ մը ածականներ ալ կան, որոնք անորոշ կամ ժխտական կը կոչուին և հետեւեալներն են.

Ամենայն, ամենայնի, յամենայնէ, ամենայնիւ.

Այլ, այլոյ, այլում, յայլմէ, այլով. Այլք, այլոց, այլովք.

Իւրաքանչիւր, րոյ, րում, րմէ, րով. րք, րոց, րովք ։

Միւս, միւսոյ, միւսում, 'ի միւսմէ, միւսով. Միւսք, միւսոց, միւսովք.

Ոմն, ուրումն, ումեմն, յումեմնէ, ումամբ. Ոմանք, ոմանց, ոմամբք.

Ոք, ուրուք, ումեք, յումեքէ, ումամբ. Ոմանք, ոմանց, ոմամբք.

իմն, ինչ } իրիք, իմիք, յիմեքէ, իւիք.

Նոյն, նորին, նմին, 'ի նմին, նովին կամ նովիմբ,
Նոքին, նոցին կամ նոցունց, զնոսին, 'ի նոցունց, նոքիմբք.

Սոյն, դոյն ալ այսպէս կը հոլովին ։

Ո՞վ կամ ո՞, զո՞վ կամ զո՞, ո՞յր, ո՞ւմ, յումմէ՞, որո՞վ.
Ո՞յք, ո՞յց, որո՞վք ։

Որ , որոյ , որում , յորմէ , որով · Որք , որոց , որովք ·
Զի՞նչ , է՞ր , ի՞մ , առ իմէ՞ , ի՞ւ ։

38· Ասոնք ալ , երբ ածական , շատ անգամ գոյականներու հետ , առաջ կամ վերջը դրուելով կը հոլովին , զոր օրինակ ·

Այր այլ , առն այլոյ , առն այլում , եւայլն ։
Այր ոմն , առն ուրումն , առն ումեմն , յառնէ ումեմնէ · արամբ ոմամբ · կամ , Այր ոք , առն ուրուք , առն ումեք , յառնէ ումեքէ · Արք ոմանք , արանց ոմանց , արամբք ոմամբք , զարս ոմանս ·
Գործ ինչ , գործոյ իրիք , գործոյ իմիք , ՚ի գործոյ իմիքէ , գործով իւիք ·
Նոյն բան , Նորին բանի , Նմին բանի , ՚ի Նմին բանէ · Նովին բանիւ · Նոյն բանք , Նոցին բանից , Նովին բանիւք ·
Որ տուն , որոյ տան , որում տան , յորմէ տանէ , որով տամբ · Որ տունք , որոց տանց , որովք տամբք ·

Ո՞վ կամ ո՞ , գոյականաբար կը վարուի · մինակ ոք բառին հետ երբ ածական կը հոլովի այսպէս ·

Ո՞վ կամ ո՞ ոք , ո՞յր ուրուք , ո՞ւմ ումեք , յո՞ւմէ ումեքէ ։

Զինչ ալ մինակ ինչ բառին հետ երբ ածական կը գործածուի այսպէս ·

Զի՞նչ ինչ , ի՞ր իրիք , ի՞մ իմիք , ի՞ւ իւիք ։

39. Միմեանց, իրերաց, բառերը գոյականաբար կը գործածուին, ուղղական չունին, և հետեւեալ կերպով կը հոլովին։

| | Յոգ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո. | չունի. | չունի. |
| Ս. | Միմեանց. | իրերաց. |
| Տ. | Միմեանց. | իրերաց. |
| Հ. | զՄիմեանս. | զիրեարս. |
| Բ. | 'ի Միմեանց. | յիրերաց. |
| Գ. | Միմեամբք. | իրերօք. |

40. Ածականներն առանց գոյականի ալ գործածուելով, գոյականի պաշտօն կը վարեն. և այն ատեն ածականը գոյականաբար առնուած կ'ըսուի. զոր օրինակ. Անզգամն անգոսնէ զխրատ հօր. Անզգամը հօրը խրատը կ'անարգէ. Արդարք ժառանգեսցեն զերկիր. Արդարներն երկիրը պիտի ստանան. Հոս Անզգամ, արդարք, անզգամ մարդ, արդար մարդիկ ըսել է։

## ԳԼՈՒԽ Գ.

## ԴԵՐԱՆՈՒՆ

41. Դերանուն կ'ըսուին այն բառերը որոնք խօսքին մէջ առաջուց յիշուած բառի մը տեղ կը դրուին, նոյն բառը չկրկնելու համար. զոր օրինակ. Աստուած արդար է.

անիկա յանցաւորները կը պատժէ. Տեսայ այն ծառը՝ որ քեզի հետ էր։ Այս խօսքերուն մէջ անիկա, որ, դերանուն են. քանզի առջինը (անիկա) Աստուած բառին տեղ դրուած է. իսկ երկրորդը (որ)՝ ծառը բառին տեղ։

42. Դերանունները դէմք ալ կը ցուցնեն. և դէմքը երեք է. առաջին, երկրորդ, երրորդ։ Առաջին դէմքն է խօսողը. երկրորդն է ան՝ որուն կը խօսուի. երրորդն է ան՝ որուն վրայով կը խօսուի։

43. Դերանունները չորս տեսակ են. Իսկական, կամ անձնական, Ցուցական, Ստացական կամ յատկացուցիչ և Յարաբերական։

44. Ա. Իսկական դերանուններն են. Ես, Դուն, Սա, Դա, Նա, Ինքն, Իւր։

45. Ես՝ առաջին դէմքի դերանուն է. դուն՝ երկրորդ դէմքի. սա, դա, նա, ինքն, իւր՝ երրորդ դէմքի։

46. Իսկական դերանունները հետեւեալ կերպով կը հոլովին.

| | Ա. ԴԷՄՔ | | Բ. ԴԷՄՔ | | Գ. ԴԷՄՔ | |
|---|---|---|---|---|---|---|
| | Եզ. | Յոգ. | Եզ. | Յոգ. | Եզ. | Յոգ. |
| Ո. | Ես. | Մեք. | Դու. | Դուք. | Նա. | Նոքա. |
| Ս. | Իմ. | Մեր. | Քո. | Ձեր. | Նորա. | Նոցա. |
| Տ. | Ինձ. | Մեզ. | Քեզ. | Ձեզ. | Նմա. | Նոցա. |
| Հ. | զիս. | զՄեզ. | զՔեզ. | զՁեզ. | զՆա. | զՆոսա. |
| Բ. | յինէն. | 'ի Մէնջ. | 'ի Քէն. | 'ի Ձէնջ. | 'ի Նմանէ. | 'ի Նոցանէ |
| Գ. | ինեւ. | Մեօք. | Քեւ. | Ձեօք. | Նովաւ. | Նոքօք. |

## Գ. ԴԷՄՔ

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո. | ինքն. | ինքեանք. |
| Ս. | ինքեան. | ինքեանց. |
| Տ. | ինքեան. | ինքեանց. |
| Հ. | զինքն. | զինքեանս. |
| Բ. | յինքենէ. | յինքեանց. |
| Գ. | ինքեամբ. | ինքեամբք. |

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո. | չունի. | իւրեանք. |
| Ս. | իւր, իւրեան. | իւրեանց. |
| Տ. | իւր, իւրեան. | իւրեանց. |
| Հ. | չունի. | զիւրեանս. |
| Բ. | յիւրմէ. | յիւրեանց. |
| Գ. | իւրեւ, իւրեաւ, իւրեամբ, | իւրեամբք. |

Սա, դա դերանունները նոյն պէս կը հոլովին:

47. Բ. Ցուցական դերանունն է՝ Այս, այդ, այն որոնք հետեւեալ կերպով կը հոլովին:

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո. | Այս. | Այս, այսոքիկ. |
| Ս. | Այսր, այսորիկ. | Այսց, այսոցիկ. |
| Տ. | Այսմ, այսմիկ. | Այսց, այսոցիկ. |
| Հ. | զԱյս. | զԱյս, զայսոսիկ. |
| Բ. | յԱյսմ, յայսմանէ. | յԱյսց. յայսցանէ. |
| Գ. | Այսու, այսուիկ. | Այսու, այսոքիւք. |

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո· | Այն· | Այնք, այնոքիկ· |
| Ս· | Այնր, այնորիկ· | Այնց, այնոցիկ· |
| Տ· | Այնմ, այնմիկ· | Այնց, այնոցիկ· |
| Հ· | զԱյն· | զԱյնս, զայնոսիկ· |
| Բ· | յԱյնմ, յայնմանէ· | յԱյնց, յայնցանէ· |
| Գ· | Այնու, այնուիկ· | Այնու, այնոքիւք· |

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո· | Այդ· | Այդք, այդոքիկ· |
| Ս· | Այդր, այդորիկ· | Այդց, այդոցիկ· |
| Տ· | Այդմ, այդմիկ· | Այդց, այդոցիկ· |
| Հ· | զԱյդ· | զԱյդ, զայդոսիկ· |
| Բ· | յԱյդմ, յայդմանէ· | յԱյդց, յայդցանէ· |
| Գ· | Այդու, այդուիկ· | Այդու, այդոքիւք· |

48· Ցուցականներն, երբեւ ածական, գոյականներու հետ մէկտեղ հոլովելով կը գործածուին, և թէ առաջ թէ ետքը կրնան գրուիլ: Եթէ առաջ գրուին՝ կարճ հոլովները կը գործածուին, եթէ ետքը գրուին՝ երկայնները, և ան ատեն գոյականին վրայ ս, դ, ն գիրերը կ՚աւելնան. զոր օրինակ.

### ԱՌԱՋ ԴՐՈՒԱԾ

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո· | Այս տուն· | Այս տունք· |
| Ս· | Այսր տան· | Այսց տանց· |
| Տ· | Այսմ տան· | Այսց տանց· |
| Հ· | զԱյս տուն· | զԱյս տունս· |
| Բ· | յԱյսմ տանէ· | յԱյսց տանց· |
| Գ· | Այսու տամբ· | Այսու տամբք· |

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո. | Այն տուն. | Այն տունք. |
| Ս. | Այնր տան. | Այնց տանց. |
| Տ. | Այնմ տան. | Այնց տանց. |
| Հ. | զԱյն տուն. | զԱյն տունս. |
| Բ. | յԱյնմ տանէ. | յԱյնց տանց. |
| Գ. | Այնու տամբ. | Այնու տամբք. |

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո. | Այդ տուն. | Այդ տունք. |
| Ս. | Այդր տան. | Այդց տանց. |
| Տ. | Այդմ տան. | Այդց տանց. |
| Հ. | զԱյդ տուն. | զԱյդ տունս. |
| Բ. | յԱյդմ տանէ. | յԱյդց տանց. |
| Գ. | Այդու տամբ. | Այդու տամբք. |

## ՎԵՐՋԸ ԴՐՈՒԱԾ

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո. | Տունս այս. | Տունքս այսոքիկ. |
| Ս. | Տանս այսորիկ. | Տանցս այսոցիկ. |
| Տ. | Տանս այսմիկ. | Տանցս այսոցիկ. |
| Հ. | զՏունս զայս. | զՏունս զայսոսիկ. |
| Բ. | ՚ի Տանէս յայսմանէ. | ՚ի Տանցս յայսցանէ. |
| Գ. | Տամբս այսուիկ. | Տամբքս այսոքիւք. |

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո. | Տունն այն. | Տունքն այնոքիկ. |
| Ս. | Տանն այնորիկ. | Տանցն այնոցիկ. |
| Տ. | Տանն այնմիկ. | Տանցն այնոցիկ. |
| Հ. | զՏունն զայն. | զՏունսն զայնոսիկ. |
| Բ. | ՚ի Տանէն յայնմանէ. | ՚ի Տանցն յայնցանէ. |
| Գ. | Տամբն այնուիկ. | Տամբքն այնոքիւք. |

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո. | Տունդ այդ. | Տունքդ այդոքիկ. |
| Ս. | Տանդ այդորիկ. | Տանցդ այդոցիկ. |
| Տ. | Տանդ այդմիկ. | Տանցդ այդոցիկ. |
| Հ. | զՏունդ զայդ. | զՏունսդ զայդոսիկ. |
| Բ. | 'ի Տանէդ յայդմանէ. | 'ի Տանցդ յայդցանէ. |
| Գ. | Տամբդ այդուիկ. | Տամբքդ այդոքիւք. |

49. ս, դ, ն գիրերն՝ այս, այդ, այն դերանուններուն կրճատեալն են, և դիմորոշ յօդ կը կոչուին, ու դերանուանց տեղ կը դրուին, կամ անոնց զօրութիւնն ունին ։

50. Գ. Ստացական կամ յատկացուցիչ կոչուած դերանուններն են՝ իմ, քո, մեր, ձեր, իւր ։

Ասոնք հետևեալ կերպով կը հոլովին ։

Եզակի.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ո. | Իմ. | Քո. | Մեր. | Ձեր. | Իւր. |
| Ս. | Իմոյ. | Քոյ. | Մերոյ. | Ձերոյ. | Իւրոյ. |
| Տ. | Իմում. | Քում. | Մերում. | Ձերում. | Իւրում. |
| Հ. | զԻմ. | զՔո. | զՄեր. | զՁեր. | զԻւր. |
| Բ. | յԻմմէ. | 'ի Քումմէ. | 'ի Մերմէ. | 'ի Ձերմէ. | յԻւրմէ. |
| Գ. | Իմով. | Քով. | Մերով. | Ձերով. | Իւրով. |

Յոգնակի.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ո. | Իմք. | Քոյք. | Մերք. | Ձերք. | Իւրք. |
| Ս. | Իմոց. | Քոց. | Մերոց. | Ձերոց. | Իւրոց. |
| Տ. | Իմոց. | Քոց. | Մերոց. | Ձերոց. | Իւրոց. |
| Հ. | զԻմս. | զՔոյս. | զՄերս. | զՁերս. | զԻւրս. |
| Բ. | յԻմոց. | 'ի Քոց. | 'ի Մերոց. | 'ի Ձերոց. | յԻւրոց. |
| Գ. | Իմովք. | Քովք. | Մերովք. | Ձերովք. | Իւրովք. |

51. Ստացականները յատկացուցչի զօրութիւն ունին, և երբ ածական, գոյականներէն առաջ կամ ետքը գրուելով, մէկտեղ կը հոլովին, այսպէս.

ԱՌԱՋ ԴՐՈՒԱԾ

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո. | իմ տուն. | իմ տունք. |
| Ս. | իմոյ տան. | իմոց տանց. |
| Տ. | իմում տան. | իմոց տանց. |
| Հ. | զ իմ տուն. | զ իմ տունս. |
| Բ. | յ իմմէ տանէ. | յ իմոց տանց. |
| Գ. | իմով տամբ. | իմովք տամբք. |

ԵՏՔԸ ԴՐՈՒԱԾ

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո. | Տուն իմ. | Տունք իմ. |
| Ս. | Տան իմոյ. | Տանց իմոց. |
| Տ. | Տան իմում. | Տանց իմոց. |
| Հ. | զ Տուն իմ. | զ Տունս իմ. |
| Բ. | 'ի Տանէ իմմէ. | 'ի Տանց իմոց. |
| Գ. | Տամբ իմով. | Տամբք իմովք. |

Այսպէս կ'ըլլան միւս ստացականներն ալ:

52. Դ. Յարաբերական դերանունն է «ր կամ «, և հետեւեալ կերպով կը հոլովի:

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո. | Որ, ո. | Որ, որք, ոյք. |
| Ս. | Որոյ, ոյր. | Որոց, ոյց. |
| Տ. | Որում, ում. | Որոց, ոյց. |
| Հ. | զՈր, զո. | զՈր, զորս, զոյս. |
| Բ. | յՈրմէ, յումմէ. | յՈրոց, յոյց. |
| Գ. | Որով. | Որովք. |

## ԳԼՈՒԽ Դ.

### ՆԱԽԴԻՐ ԿԱՄ ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

53. *Նախդիր կամ նախադրութիւն կ'ըսուին այն բառերը որոնք, հոլովեալ բառով մը, գործողութեան մը պարագաները, զոր օրինակ՝ տեղը, ժամանակը, կերպը, պատճառը, կը ցուցնեն :*

54. *Նախադրութիւնները մինակ չեն գործածուիր, այլ իրենցմէ ետքը բառ մը կ'ուզեն, ապա թէ ոչ իմաստ մը չեն տար. զոր օրինակ, վասն, համար. նախադրութիւն է. և առանձին իմաստ մը չի տար. բայց երբ կ'ըսեմ, վասն Աստուծոյ, Աստուծոյ համար. վասն սիրոյ, սիրոյ համար, իմաստ մը կ'իմանամ:*

55. *Նախադրութեան ուղած բառը նախադրութեան խնդիր կը կոչուի, ուստի վերի օրինակներուն մէջ, Աստուծոյ, սիրոյ, բառերը վասն նախադրութեան խնդիր են :*

56. *Գլխաւոր նախադրութիւնները հետեւեալներն են :*

*ի, յ, ց, զ, առ, ընդ, ըստ.*

*Դարձեալ,*

Առաջի. առջեւ.<br>
Զկնի } ետեւէն.<br>
Զհետ }

ի վերայ· վրան·
ի ներքոյ· տակը·
ի մէջ / ի միջի } մէջտեղը·
Արտաքոյ· դուրսը·
Յանդիման· դէմացը·
ի վեր, 'ի վերոյ քան զ· (բանէ մը) վեր·
Փոխանակ· տեղը·
Յետոյ· ետքը, ետեւը·
Յետ· ետքը·
Յառաջ քան զ / Նախ քան զ } (բանէ մը) առաջ·
ի ձեռն· ձեռօքը·
Գաղտ· գաղտուկ·
Հակառակ / Ընդդէմ } դէմ·
Հանդերձ· մէկտեղ·
Շուրջ զ· բոլորտիքը·
Մինչեւ 'ի / Մինչեւ ց } մինչեւ, ինչուան·
Վասն / Յաղագս / Սակս } համար·

## ԳԼՈՒԽ Ե·

### ԲԱՅ

57· Բայ կ'ըսուին այն բառերը որոնք ընել, ըլլալ և ըլլալնին կը ցուցնեն. զոր օրինակ Սիրեմ,

կը սիրեմ, Շրջիմ, կը պտտիմ՝ բան մը ընել կը ցուցնեն. Եմ, եմ, Հիւանդանամ՝ կը հիւընդնամ, բան մը ըլլալ կը ցուցնեն. Սիրուիմ, կը սիրուիմ՝ ընդունիլ կը ցուցնէ, ուստի բայ են:

58. Բայերը երեք տեսակ են. Էական բայ, Ներգործական բայ, և Չէզոք բայ:

59. Էական բայն է Եմ:

60. Ներգործական բայերը շատ են, և ամեն ներգործական բայ կրաւորական կ'ունենայ:

Ներգործականը գործողութիւնն ընել կը ցուցնէ. Կրաւորականը գործողութիւնը կրել (ըլլուիլ) կը ցուցնէ. զոր օրինակ, Սիրեմ, կը սիրեմ՝ ներգործական է. Սիրուիմ, կը սիրուիմ՝ կրաւորական է:

61. Չէզոք բայերէն ոմանք ընել կը ցուցընեն. ինչպէս՝ Շրջիմ, Մտանեմ, Երթամ. ոմանք ալ ըլլալ կը ցուցնեն, զոր օրինակ, Հիւանդանամ, Մեռանիմ, Ծերանամ: Բայց չէզոք բայերը կրաւորական չեն կրնար ունենալ:

62. Բայերն ունին Թիւ, Դէմք, Ժամանակ և Եղանակ:

63. Թիւը՝ եզակին և յոգնակին է. զոր օրինակ, Սիրեմ, սիրես, սիրէ, կը սիրեմ, կը սիրես, կը սիրէ՝ եզակի են. Սիրեմք, սիրէք, սիրեն, կը սիրենք, կը սիրէք, կը սիրեն՝ յոգնակի են:

64. Դէմքը երեք է, առաջին, երկրորդ, երրորդ, զոր օրինակ, սիրեմ, կը սիրեմ՝ առաջին

դէմք է . «Սիրես» . կը սիրես՝ երկրորդ դէմք է . «Սիրէ , կը սիրէ՝ երրորդ դէմք է ։ Այսպէս ալ յոգնակին մէջ ։

65. Ժամանակը բուն երեք է . Ներկայ , Անցեալ , Ապառնի ։ Ներկան՝ հիմակուանը կը ցուցնէ , զոր օրինակ , «Սիրեմ , կը սիրեմ՝ Ներկայ է . Անցեալն՝ անցածը կը ցուցնէ . զոր օրինակ , «Սիրեցի , սիրեցի՝ անցեալ է ։ Ապառնին՝ գալիքը կը ցուցնէ . զոր օրինակ , «Սիրեցից , պիտի սիրեմ՝ ապառնի է ։

66, Անցեալը երկու է . Անկատար անցեալ որ է «Սիրէի , կը սիրէի . և Կատարեալ անցեալ որ է «Սիրեցի , սիրեցի ։

97. Եղանակը՝ չորս է . Սահմանական , Հրամայական , Ստորադասական և Դերբայ ։

68. Սահմանականը , հրամայականը և ստորադասականը դէմք ունին , և դիմաւոր բայ կը կոչուին . իսկ Դերբայը դէմք չունի , ուստի և անդէմ բայ կը կոչուի ։

69. Դերբայը երեք է . Անորոշ դերբայ , Անցեալ դերբայ և Ապառնի դերբայ . զոր օրինակ . Սիրել՝ անորոշ դերբայ է . Սիրեալ՝ անցեալ դերբայ . Սիրելոց՝ ապառնի դերբայ ։

70. Բայի մը ինչ Թիւ , ինչ դէմք , ինչ ժամանակ և ինչ եղանակ ըլլալը՝ բային վերջաւորութեանը փոխուելէն կը ճանչցուի ։

71. Թիւ , դէմք , ժամանակ և եղանակ ցուցնելու համար բային վերջաւորութեանը փոխուելուն՝ Լծորդութիւն կ՚ըսուի ։

72. Լծորդութիւնը , այսինքն՝ բայերուն վեր-

ջաւորութեան կերպը, ըլլալ է: Բայերէն ոմանք եմ կը վերջաւորին, զոր օրինակ, սիրեմ, հատանեմ, ոմանք իմ կը վերջաւորին, զոր օրինակ, խօսիմ, ուսանիմ. ոմանք ամ կը վերջաւորին, զոր օրինակ. աղամ, խոստանամ. ոմանք ալ ում կը վերջաւորին, զոր օրինակ, թողում, ընթեռնում:

73. Բայերուն մեծ մասը կանոնաւոր է, ոմանք ալ անկանոն են:

## ԷԱԿԱՆ ԲԱՅ

## ԵՄ

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դ. | Եմ. | եմ. | պէն իմ. |
| Եզ. Բ. Դ. | Ես. | ես. | սէն սին. |
| Գ. Դ. | Է. | է. | օ տուր. |
| Ա. Դ. | Եմք. | էնք. | պիզ իզ. |
| Յոգ. Բ. Դ. | Էք. | էք. | սիզ սինիզ. |
| Գ. Դ. | Են. | էն. | օնլար տըր. |

Անկատար անցեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դ. | Էի. | էի. | պէն իտիմ. |
| Եզ. Բ. Դ. | Էիր. | էիր. | սէն իտին. |
| Գ. Դ. | Էր. | էր. | օ իտի. |
| Ա. Դ. | Եաք. | էինք. | պիզ իտիք. |
| Յոգ. Բ. Դ. | Էիք. | էիք. | սիզ իտինիզ. |
| Գ. Դ. | Էին. | էին. | օնլար իտի. |

Կատարեալ անցեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դ. | Եղէ. | եղայ. | օլտում. |
| Եզ. Բ. Դ. | Եղեր. | եղար. | օլտուն. |
| Գ. Դ. | Եղեւ. | եղաւ. | օլտու. |
| Ա. Դ. | Եղաք. | եղանք. | օլտուգ. |
| Յք. Բ. Դ. | Եղէք. | եղաք. | օլտունուզ. |
| Գ. Դ. | Եղեն. | եղան. | օլտուլար. |

Ապառնի.

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դ. | Եղէց. | պիտի ըլլամ. | օլաճաղըմ. |
| Եզ. Բ. Դ. | Եղիցիս. | պիտի ըլլաս. | օլաճագսըն. |
| Գ. Դ. | Եղիցի. | պիտի ըլլայ. | օլաճագ. |
| Ա. Դ. | Եղիցուք. | պիտի ըլլանք. | օլաճաղըզ. |
| Յք. Բ. Դ. | Եղիջիք. | պիտի ըլլաք. | օլաճագսընըզ. |
| Գ. Դ. | Եղիցին. | պիտի ըլլան. | օլաճագլար. |

Հրամայական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. Բ. Դ. | Եր, լիջիր. | եղիր. | օլ. |
| | Մի լինիր. | մի ըլլար. | օլմա. |
| Յք. Բ. Դ. | Եղերուք, լերուք, լիջիք. | եղէք. | օլուն. |
| | Մի՛ լինիք. | մի ըլլաք. | օլմայըն. |

Ստորադասական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դ. | Իցեմ. | ըլլամ. | օլայըմ. |
| Եզ. Բ. Դ. | Իցես. | ըլլաս. | օլասըն. |
| Գ. Դ. | Իցէ. | ըլլայ. | օլսուն. |
| Ա. Դ. | Իցեմք. | ըլլանք. | օլալըմ. |
| Յք. Բ. Դ. | Իցէք. | ըլլաք. | օլասընըզ. |
| Գ. Դ. | Իցեն. | ըլլան. | օլսունլար. |

Անորոշ դերբայ.

Անդէմ. Լինել. ըլլալ. օլմագ.

Անցեալ դերբայ.

Անդէմ. Եղեալ, լեալ. եղած. օլմուշ.

Ապառնի դերբայ.

Անդէմ. Լինելոց. ըլլալու. օլաճագ.

## ԱՌԱՋԻՆ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ-էմ

## ՍԻՐ-եմ

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| Դէմք. | Ներկայ. | | |
|---|---|---|---|
| Ա. | Սիր-եմ. | կը սիրեմ. | սէվէր իմ. |
| Եզ. Բ. | Սիր-ես. | կը սիրես. | սէվէր սին. |
| Գ. | Սիր-է. | կը սիրէ. | սէվէր. |
| Ա. | Սիր-եմք. | կը սիրենք. | սէվէր իզ. |
| Յոգ. Բ. | Սիր-էք. | կը սիրէք. | սէվէր սինիզ. |
| Գ. | Սիր-են. | կը սիրեն. | սէվէր լէր. |

Անկատար անցեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Ա. | Սիր-էի. | կը սիրէի. | սէվէր իտիմ. |
| Եզ. Բ. | Սիր-էիր. | կը սիրէիր. | սէվէր իտին. |
| Գ. | Սիր-էր. | կը սիրէր. | սէվէր իտի. |
| Ա. | Սիր-էաք. | կը սիրէինք. | սէվէր իտիք. |
| Յոգ. Բ. | Սիր-էիք. | կը սիրէիք. | սէվէր իտինիզ. |
| Գ. | Սիր-էին. | կը սիրէին. | սէվէր իտիլէր. |

### Կատարեալ անցեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Ա. | Սիր-եցի. | սիրեցի. | սէվտիմ. |
| Եզ. Բ. | Սիր-եցեր. | սիրեցիր. | սէվտին. |
| Գ. | Սիր-եաց. | սիրեց. | սէվտի. |
| Ա. | Սիր-եցաք. | սիրեցինք. | սէվտիք. |
| Յք. Բ. | Սիր-եցէք. | սիրեցիք. | սէվտինիզ. |
| Գ. | Սիր-եցին. | սիրեցին. | սէվտիլէր. |

### Ապառնի.

| | | | |
|---|---|---|---|
| Ա. | Սիր-եցից. | պիտի սիրեմ. | սէվէճէյիմ. |
| Եզ. Բ. | Սիր-եսցես. | պիտի սիրես. | սէվէճէքսին. |
| Գ. | Սիր-եսցէ. | պիտի սիրէ. | սէվէճէք. |
| Ա. | Սիր-եսցուք. | պիտի սիրենք. | սէվէճէյիզ. |
| Յք. Բ. | Սիր-եսջիք. | պիտի սիրէք. | սէվէճէքսինիզ. |
| Գ. | Սիր-եսցեն. | պիտի սիրեն. | սէվէճէքլէր. |

### Հրամայական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. Բ. | Սիր-եա, սիր-եսջիր. | սիրէ. | սէվ. |
| | Մի սիր-եր. | մի սիրեր. | սէվմէ. |
| Յք. Բ. | Սիր-եցէք, սիր-եսջիք. | սիրեցէք. | սէվին. |
| | Մի սիր-էք. | մի սիրէք. | սէվմէյին. |

### Ստորադասական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Ա. | Սիր-իցեմ. | սիրեմ. | սէվէյիմ. |
| Եզ. Բ. | Սիր-իցես. | սիրես. | սէվէսին. |
| Գ. | Սիր-իցէ. | սիրէ. | սէվսին. |
| Ա. | Սիր-իցեմք. | սիրենք. | սէվէլիմ. |
| Յք. Բ. | Սիր-իցէք. | սիրէք. | սէվէսինիզ. |
| Գ. | Սիր-իցեն. | սիրեն. | սէվսինլէր. |

Անորոշ դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Անդէմ. | Սիր-ել. | սիրուիլ. | սէվիլմէք. |

Անցեալ դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Անդէմ. | Սիր-եալ. | սիրուած. | սէվիլմիշ. |

Ապառնի դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Անդէմ. | Սիր-ելոց. | սիրուելու. | սէվիլէճէք. |

| Ներգործական. | Չէզոք. |
|---|---|
| Ազատեմ, ատեցի. | Ամաչեմ, չեցի. |
| Բժշկեմ, կեցի. | Գոչեմ, չեցի. |

## ԿՐԱՒՈՐԱԿԱՆ

## ՍԻՐԻՄ

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ.

| Դէմք. | | | |
|---|---|---|---|
| Ա. | Սիր-իմ. | կը սիրուիմ. | սէվիլիյորըմ. |
| Եզ. Բ. | Սիր-իս. | կը սիրուիս. | սէվիլիյորսուն. |
| Գ. | Սիր-ի. | կը սիրուի. | սէվիլիյոր. |
| Ա. | Սիր-իմք. | կը սիրուինք. | սէվիլիյորուզ. |
| Յոգ. Բ. | Սիր-իք. | կը սիրուիք. | սէվիլիյորսունուզ. |
| Գ. | Սիր-ին. | կը սիրուին. | սէվիլիյորլար. |

Անկատար անցեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Ա. | Սիր-էի. | կը սիրուէի. | սէվիլիյոր իտիմ. |
| Եզ. Բ. | Սիր-էիր. | կը սիրուէիր. | սէվիլիյոր իտին. |
| Գ. | Սիր-էր. | կը սիրուէր. | սէվիլիյոր իտի. |
| Ա. | Սիր-էաք. | կը սիրուէինք. | սէվիլիյոր իտիք. |
| Յոգ. Բ. | Սիր-էիք. | կը սիրուէիք. | սէվիլիյորիտինիզ. |
| Գ. | Սիր-էին. | կը սիրուէին. | սէվիլիյոր իտիլէր. |

### Կատարեալ անցեալ

| | | | |
|---|---|---|---|
| Ա. | Սիր-եցայ. | սիրուեցայ. | սէվիլտիմ. |
| Եզ: Բ. | Սիր-եցար. | սիրուեցար. | սէվիլտին. |
| Գ. | Սիր-եցաւ. | սիրուեցաւ. | սէվիլտի. |
| Ա. | Սիր-եցաք. | սիրուեցանք. | սէվիլտիք. |
| Յգ. Բ. | Սիր-եցայք. | սիրուեցաք. | սէվիլտինիզ. |
| Գ. | Սիր-եցան. | սիրուեցան. | սէվիլտիլէր. |

### Ապառնի.

| | | | |
|---|---|---|---|
| Ա. | Սիր-եցայց. | պիտի սիրուիմ. | սէվիլէճէյիմ. |
| Եզ: Բ. | Սիր-եսցիս. | պիտի սիրուիս. | սէվիլէճէքսին. |
| Գ. | Սիր-եսցի. | պիտի սիրուի. | սէվիլէճէք. |
| Ա. | Սիր-եսցուք. | պիտի սիրուինք. | սէվիլէճէյիզ. |
| Յգ. Բ. | Սիր-եսջիք. | պիտի սիրուիք. | սէվիլէճէքսինիզ. |
| Գ. | Սիր-եսցին. | պիտի սիրուին. | սէվիլէճէքլէր. |

### Հրամայական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Եզ: Բ. | Սիր-եաց. | սիրուէ. | սէվիլ. |
| | Մի սիր-իր. | մի՛ սիրուիր. | սէվիլմէ. |
| Յգ. Բ. | Սիր-եցարուք. | սիրուեցէք. | սէվիլին. |
| | Մի սիր-իք. | մի՛ սիրուիք. | սէվիլմէյին. |

### Ստորադասական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Ա. | Սիր-իցիմ. | սիրուիմ. | սէվիլէյիմ. |
| Եզ: Բ. | Սիր-իցիս. | սիրուիս. | սէվիլէսին. |
| Գ. | Սիր-իցի. | սիրուի. | սէվիլսին. |
| Ա. | Սիր-իցիմք. | սիրուինք. | սէվիլէլիմ. |
| Յգ. Բ. | Սիր-իցիք. | սիրուիք. | սէվիլէսինիզ. |
| Գ. | Սիր-իցին. | սիրուին. | սէվիլսինլէր. |

Անորոշ դերբայ.

Անդէմ. Սիր-ել. սիրուիլ. սէվիլմէք.

Անցեալ դերբայ.

Անդէմ. Սիր-եալ. սիրուած. սէվիլմիշ.

Ապառնի դերբայ.

Անդէմ. Սիր-ելի. սիրուելու. սէվիլէճէք.

## ԱՌԱՋԻՆ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ անեմ

## ՀԱՏ=անեմ

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ | ԿՐԱՒՈՐԱԿԱՆ |
|---|---|---|
| Դէմք. | | |
| Ա. | Հատ-անեմ. | Հատ-անիմ. |
| Եզ. Բ. | Հատ-անես. | Հատ-անիս. |
| Գ. | Հատ-անէ. | Հատ-անի. |
| Ա. | Հատ-անեմք. | Հատ-անիմք. |
| Յգ. Բ. | Հատ-անէք. | Հատ-անիք. |
| Գ. | Հատ-անեն. | Հատ-անին. |

Անկատար անցեալ

| | | |
|---|---|---|
| Ա. | Հատ-անէի. | Հատ-անէի. |
| Եզ. Բ. | Հատ-անէիր. | Հատ-անէիր. |
| Գ. | Հատ-անէր. | Հատ-անէր. |
| Ա. | Հատ-անէաք. | Հատ-անէաք. |
| Յգ. Բ. | Հատ-անէիք. | Հատ-անէիք. |
| Գ. | Հատ-անէին. | Հատ-անէին. |

### Կատարեալ անցեալ.

| | | | |
|---|---|---|---|
| | Ա. | Հատ-ի. | Հատ-այ. |
| Եզ. | Բ. | Հատ-եր. | Հատ-ար. |
| | Գ. | Հատ, եհատ. | Հատ-աւ. |
| | Ա. | Հատ-աք. | Հատ-աք. |
| Յգ. | Բ. | Հատ-էք. | Հատ-այք. |
| | Գ. | Հատ-ին. | Հատ-ան. |

### Ապառնի.

| | | | |
|---|---|---|---|
| | Ա. | Հատ-ից. | Հատ-այց. |
| Եզ. | Բ. | Հատ-ցես. | Հատ-ցիս. |
| | Գ. | Հատ-ցէ. | Հատ-ցի. |
| | Ա. | Հատ-ցուք. | Հատ-ցուք. |
| Յգ. | Բ. | Հատ-ջիք. | Հատ-ջիք. |
| | Գ. | Հատ-ցեն. | Հատ-ցին. |

### Հրամայական եղանակ.

| | | |
|---|---|---|
| Եզ. Բ. | Հատ, հատ-ջիր, հատ-անիջիր. | Հատ-իր. |
| | Մի հատ-աներ. | Մի հատ-անիր. |
| Յգ. Բ. | Հատ-էք, հատ-ջիք, հատ-անիջիք. | Հատ-արուք. |
| | Մի հատ-անէք. | Մի հատ-անիք. |

### Ստորադասական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| | Ա. | Հատ-անիցեմ. | Հատ-անիցիմ. |
| Եզ. | Բ. | Հատ-անիցես. | Հատ-անիցիս. |
| | Գ. | Հատ-անիցէ. | Հատ-անիցի. |
| | Ա. | Հատ-անիցեմք. | Հատ-անիցիմք. |
| Յգ. | Բ. | Հատ-անիցէք. | Հատ-անիցիք. |
| | Գ. | Հատ-անիցեն. | Հատ-անիցին. |

Անորոշ դերբայ.

| | | |
|---|---|---|
| Անդէմ. | Հաս-անել. | Հաս-անել. |

Անցեալ դերբայ.

| | | |
|---|---|---|
| Անդէմ. | Հաս-եալ. | Հաս-եալ. |

Ապառնի դերբայ.

| | | |
|---|---|---|
| Անդէմ. | Հաս-անելոց. | Հաս-անելի. |

Ներգործական.

Արկանեմ, կի. Տեսանեմ, սի.

Չէզոք.

Անցանեմ, ցի. Հասանեմ, սի.

## ԵՐԿՐՈՐԴ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ իմ ԵՒ անիմ

## ԽՕՍ-իմ, ՈՒՍ-անիմ

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

#### ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ

| Դէմք. | | Ներկայ. | |
|---|---|---|---|
| | Ա. | խօս-իմ. | Ուս-անիմ. |
| Եզ. | Բ. | խօս-իս. | Ուս-անիս. |
| | Գ. | խօս-ի. | Ուս-անի. |
| | Ա. | խօս-իմք. | Ուս-անիմք. |
| Յգ. | Բ. | խօս-իք. | Ուս-անիք. |
| | Գ. | խօս-ին. | Ուս-անին. |

Անկատար անցեալ.

| | | | |
|---|---|---|---|
| | Ա. | խօս-էի. | Ուս-անէի. |
| Եզ. | Բ. | խօս-էիր. | Ուս-անէիր. |

| | | | |
|---|---|---|---|
| | Գ. | *խօս-էր.* | *Ուս-անէր.* |
| | Ա. | *խօս-էաք.* | *Ուս-անէաք.* |
| Յ. | Բ. | *խօս-էիք.* | *Ուս-անէիք.* |
| | Գ. | *խօս-էին.* | *Ուս-անէին.* |

Կատարեալ անցեալ.

| | | | |
|---|---|---|---|
| | Ա. | *խօս-եցայ.* | *Ուս-այ.* |
| Եզ. | Բ. | *խօս-եցար.* | *Ուս-ար.* |
| | Գ. | *խօս-եցաւ.* | *Ուս-աւ.* |
| | Ա. | *խօս-եցաք.* | *Ուս-աք.* |
| Յ. | Բ. | *խօս-եցայք.* | *Ուս-այք.* |
| | Գ. | *խօս-եցան.* | *Ուս-ան.* |

Ապառնի.

| | | | |
|---|---|---|---|
| | Ա. | *խօս-եցայց.* | *Ուս-այց.* |
| Եզ. | Բ. | *խօս-եսցիս.* | *Ուս-ցիս.* |
| | Գ. | *խօս-եսցի.* | *Ուս-ցի.* |
| | Ա. | *խօս-եսցուք.* | *Ուս-ցուք.* |
| Յ. | Բ. | *խօս-եսջիք.* | *Ուս-ջիք.* |
| | Գ. | *խօս-եսցին.* | *Ուս-ցին.* |

Հրամայական եղանակ.

| | | |
|---|---|---|
| Եզ. Բ. | *խօս-եաց, խօս-եսջիր.* | *Ուս-ի՛ր, ուս-ջի՛ր.* |
| | *Մի խօս-իր.* | *Մի ուս-անիր.* |
| Յ. Բ. | *խօս-եցարուք, խօս-եսջիք.* | *Ուս-արուք, ուսջիք.* |
| | *Մի խօս-իք.* | *Մի ուս-անիք.* |

Ստորադասական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| | Ա. | *խօս-իցիմ.* | *Ուս-անիցիմ.* |
| Եզ. | Բ. | *խօս-իցիս.* | *Ուս-անիցիս.* |
| | Գ. | *խօս-իցի.* | *Ուս-անիցի.* |

Ա. խօս–իցիմք. Ուս–անիցիմք.
Յ. Բ. խօս–իցիք. Ուս–անիցիք.
Գ. խօս–իցին. Ուս–անիցին.

Անորոշ դերբայ.

Անդէմ. խօս–ել. Ուս–անել.

Անցեալ դերբայ.

Անդէմ. խօս–եալ. Ուս–եալ.

Ապառնի դերբայ.

Անդէմ. խօս–ելոց. Ուս–անելոց.

Ներգործական.

Խոստովանիմ, նեցայ. Ագանիմ, գայ.
Համարիմ, րեցայ. Ծնանիմ, ծնայ.

Չեզոք.

Աշխատիմ, տեցայ. Անկանիմ, կայ.
Երեւիմ, ւեցայ. Մեռանիմ, ռայ.

Իմ և անձն վերջաւորած ներգործական բայերուն կրաւորականը ներգործականին հետ նոյն է. անոր համար հասարակ բայ կոչուած են: Զոր օրինակ, խօսիմ, թէ կը խօսիմ և թէ կը խօսուիմ ըսել է:

## ԵՐՐՈՐԴ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ ամ

### Աղ–ամ

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԱՒՈՐԱԿԱՆ

Դէմք. Ներկայ.

Ա. Աղ–ամ. Աղ–ամ.
Եզ. Բ. Աղ–աս. Աղ–աս.

| | | |
|---|---|---|
| Գ. | Աղ-այ. | Աղ-այ. |
| Ա. | Աղ-ամք. | Աղ-ամք. |
| Յգ. Բ. | Աղ-այք. | Աղ-այք. |
| Գ. | Աղ-ան. | Աղ-ան. |

### Անկատար անցեալ.

| | | |
|---|---|---|
| Ա. | Աղ-այի. | Աղ-այի. |
| Եզ. Բ. | Աղ-այիր. | Աղ-այիր. |
| Գ. | Աղ-այր. | Աղ-այր. |
| Ա. | Աղ-այաք. | Աղ-այաք. |
| Յգ. Բ. | Աղ-այիք. | Աղ-այիք. |
| Գ. | Աղ-ային. | Աղ-ային. |

### Կատարեալ անցեալ.

| | | |
|---|---|---|
| Ա. | Աղ-ացի. | Աղ-ացայ. |
| Եզ. Բ. | Աղ-ացեր. | Աղ-ացար. |
| Գ. | Աղ-աց. | Աղ-ացաւ. |
| Ա. | Աղ-ացաք. | Աղ-ացաք. |
| Յգ. Բ. | Աղ-ացէք. | Աղ-ացայք. |
| Գ. | Աղ-ացին. | Աղ-ացան. |

### Ապառնի.

| | | |
|---|---|---|
| Ա. | Աղ-ացից. | Աղ-ացայց. |
| Եզ. Բ. | Աղ-ասցես. | Աղ-ասցիս. |
| Գ. | Աղ-ասցէ. | Աղ-ասցի. |
| Ա. | Աղ-ասցուք. | Աղ-ասցուք. |
| Յգ. Բ. | Աղ-ասջիք. | Աղ-ասջիք. |
| Գ. | Աղ-ասցեն. | Աղ-ասցին. |

### Հրամայական եղանակ.

| | | |
|---|---|---|
| Եզ. Բ. | Աղ-ա, աղ-ասջիր. | Աղ-ացիր. |
| | Մի աղ-ար. | Մի աղ-ար. |

Յ+. Բ. Աղ-ացէք, աղ-ասջիք. Աղ-ացարուք.
Մի աղ-այք. Մի աղ-այք.

Ստորադասական եղանակ.

Ա. Աղ-այցեմ. Աղ-այցիմ.
Եզ: Բ. Աղ-այցես. Աղ-այցիս.
Գ. Աղ-այցէ. Աղ-այցի.
Ա. Աղ-այցեմք. Աղ-այցիմք.
Յ+. Բ. Աղ-այցէք. Աղ-այցիք.
Գ. Աղ-այցեն. Աղ-այցին.

Անորոշ դերբայ.

Անդէմ. Աղ-ալ Աղ-ալ

Անցեալ դերբայ.

Անդէմ. Աղ-ացեալ Աղ-ացեալ

Ապառնի դերբայ.

Անդէմ. Աղ-ալոց. Աղ-ալից.

Ներգործական.

կարդամ, դացի. Հաւատամ, տացի.

Չէզոք.

Գնամ, նացի. Խաղամ, ղացի.

## ԵՐՐՈՐԴ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ անամ

## Գ Ո Ղ-անամ

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԱՒՈՐԱԿԱՆ

Դէմ+. Ներկայ.

Ա. Գող-անամ. Գող-անամ.
Եզ: Բ. Գող-անաս. Գող-անաս.

| | | | |
|---|---|---|---|
| | Գ. | Գող-անայ. | Գող-անայ. |
| | Ա. | Գող-անամք. | Գող-անամք. |
| Յ+. | Բ. | Գող-անայք. | Գող-անայք. |
| | Գ. | Գող-անան. | Գող-անան. |

Անկատար անցեալ։

| | | | |
|---|---|---|---|
| | Ա. | Գող-անայի. | Գող-անայի. |
| Եզ. | Բ. | Գող-անայիր. | Գող-անայիր. |
| | Գ. | Գող-անայր. | Գող-անայր. |
| | Ա. | Գող-անայաք. | Գող-անայաք. |
| Յ+. | Բ. | Գող-անայիք. | Գող-անայիք. |
| | Գ. | Գող-անային. | Գող-անային. |

Կատարեալ անցեալ.

| | | | |
|---|---|---|---|
| | Ա. | Գող-ացայ. | Գող-ացայ. |
| Եզ. | Բ. | Գող-ացար. | Գող-ացար. |
| | Գ. | Գող-ացաւ. | Գող-ացաւ. |
| | Ա. | Գող-ացաք. | Գող-ացաք. |
| Յ+. | Բ. | Գող-ացայք. | Գող-ացայք. |
| | Գ. | Գող-ացան. | Գող-ացան. |

Ապառնի.

| | | | |
|---|---|---|---|
| | Ա. | Գող-ացայց. | Գող-ացայց. |
| Եզ. | Բ. | Գող-ասցիս. | Գող-ասցիս. |
| | Գ. | Գող-ասցի. | Գող-ասցի. |
| | Ա. | Գող-ասցուք. | Գող-ասցուք. |
| Յ+. | Բ. | Գող-ասջիք. | Գող-ասջիք. |
| | Գ. | Գող-ասցին. | Գող-ասցին. |

Հրամայական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Բ. | Գող-ացիր, գող-ասջիր. | Գող-ացիր, գող-ասջիր. |

| | | |
|---|---|---|
| | Մի գող–անար· | Մի գող–անար· |
| Յ․ Բ․ | Գող–ացարուք, գող–ասջիք· | Գող–ացարուք, գող–ասջիք· |
| | Մի գող–անայք· | Մի գող–անայք· |

### Ստորադասական եղանակ·

| | | |
|---|---|---|
| Ա· | Գող–անայցեմ· | Գող–անայցիմ· |
| Եզ. Բ· | Գող–անայցես· | Գող–անայցիս· |
| Գ· | Գող–անայցէ· | Գող–անայցի· |
| Ա· | Գող–անայցեմք | Գող–անայցիմք· |
| Յ․ Բ․ | Գող–անայցէք· | Գող–անայցիք· |
| Գ· | Գող–անայցեն· | Գող–անայցին· |

### Անորոշ դերբայ·

| | | |
|---|---|---|
| Անդէմ· | Գող–անալ· | Գող–անալ· |

### Անցեալ դերբայ·

| | | |
|---|---|---|
| Անդէմ· | Գող–ացեալ· | Գող–ացեալ· |

### Ապառնի դերբայ·

| | | |
|---|---|---|
| Անդէմ· | Գող–անալոց· | Գող–անալի· |

### Ներգործական·

Խոստանամ, տացայ· Մերկանամ, կացայ·

### Չէզոք·

Գոհանամ, հացայ· Հեռանամ, ռացայ·

## ՉՈՐՐՈՐԴ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ ուլ

## Թ Ո Ղ-ուլ

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| Դէմք. | Ներկայ. | |
|---|---|---|
| Ա. | թող-ում. | թող-ում. |
| Եզ. Բ. | թող-ուս. | թող-ուս. |
| Գ. | թող-ու. | թող-ու. |
| Ա. | թող-ումք. | թող-ումք. |
| Յգ. Բ. | թող-ուք. | թող-ուք. |
| Գ. | թող-ուն. | թող-ուն. |
| | **Անկատար անցեալ.** | |
| Ա. | թող-ուի. | թող-ուի. |
| Եզ. Բ. | թող-ուիր. | թող-ուիր |
| Գ. | թող-ոյր. | թող-ոյր. |
| Ա. | թող-ուաք. | թող-ուաք. |
| Յգ. Բ. | թող-ուիք. | թող-ուիք. |
| Գ. | թող-ուին. | թող-ուին. |
| | **Կատարեալ անցեալ.** | |
| Ա. | թող-ի. | թող-այ. |
| Եզ. Բ. | թող-եր. | թող-ար. |
| Գ. | թող, եթող. | թող-աւ. |
| Ա. | թող-աք. | թող-աք. |
| Յգ. Բ. | թող-էք. | թող-այք. |
| Գ. | թող-ին. | թող-ան. |
| | **Ապառնի.** | |
| Ա. | թող-ից. | թող-այց. |
| Եզ. Բ. | թող-ցես. | թող-ցիս. |
| Գ. | թող-ցէ. | թող-ցի. |

| | | |
|---|---|---|
| Ա. | Թող-ցուք. | Թող-ցուք. |
| Յգ. Բ. | Թող-ջիք. | Թող-ջիք. |
| Գ. | Թող-ցեն. | Թող-ցին. |

Հրամայական եղանակ.

| | | |
|---|---|---|
| Եզ. Բ. | Թող, Թող-ջիր.<br>Մի Թող-ուր. | Թող-իր, Թող-ջիր.<br>Մի Թող-ուր. |
| Յգ. Բ. | Թող-էք, Թող-ջիք.<br>Մի Թող-ուք. | Թող-արուք, Թող-ջիք.<br>Մի Թող-ուք. |

Ստորադասական եղանակ.

| | | |
|---|---|---|
| Ա. | Թող-ուցում. | Թող-ուցում. |
| Եզ. Բ. | Թող-ուցուս. | Թող-ուցուս. |
| Գ. | Թող-ուցու. | Թող-ուցու. |
| Ա. | Թող-ուցումք. | Թող-ուցումք. |
| Յգ. Բ. | Թող-ուցուք. | Թող-ուցուք. |
| Գ. | Թող-ուցուն. | Թող-ուցուն. |

Աներոյ դերբայ.

| | | |
|---|---|---|
| Անդէմ, | Թող-ուլ. | Թող-ուլ. |

Անցեալ դերբայ.

| | | |
|---|---|---|
| Անդէմ. | Թող-եալ. | Թող-եալ. |

Ապառնի դերբայ.

| | | |
|---|---|---|
| Անդէմ. | Թող-լոց. | Թող-լի. |

Ներգործական.

Արգելում, գելի. Հեղում, ղի.

Չէզոք.

Զրօսնում, սայ. Զգենում, գեցայ.

## ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

### Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Առնեմ. | Ասեմ. | Գիտեմ. | Դնեմ. |

### Անկատար անցեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Առնէի. | Ասէի. | Գիտէի. | Դնէի. |

### Սահմանական կատարեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Արարի. | Ասացի. | Գիտացի. | Եդի. |
| Արարեր. | Ասացեր. | Գիտացեր. | Եդիր. |
| Արար. | Ասաց. | Գիտաց. | Եդ. |
| Արարաք. | Ասացաք. | Գիտացաք. | Եդաք. |
| Արարէք. | Ասացէք. | Գիտացէք. | Եդիք. |
| Արարին. | Ասացին. | Գիտացին. | Եդին. |

### Ապառնի.

| | | | |
|---|---|---|---|
| Արարից. | Ասացից. | Գիտացից. | Եդից. |
| Արասցես. | Ասասցես. | Գիտասցես. | Դիցես. |
| Արասցէ. | Ասասցէ. | Գիտասցէ. | Դիցէ. |
| Արասցուք. | Ասասցուք. | Գիտասցուք. | Դիցուք. |
| Արասջիք. | Ասասջիք. | Գիտասջիք. | Դիջիք. |
| Արասցեն. | Ասասցեն. | Գիտասցեն. | Դիցեն. |

### Հրամայական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Արա. | Ասա. | Գիտա. | Դիր. |
| Մի առներ. | Մի ասեր. | Մի գիտեր. | Մի դներ. |
| Արարէք. | Ասացէք. | Գիտացէք. | Դիք. |
| Մի առնէք. | Մի ասէք. | Մի գիտէք. | Մի դնէք. |

### Ստորադասական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Առնիցեմ. | Ասիցեմ. | Գիտիցեմ. | Դնիցեմ. |

Անորոշ դերբայ·

| | | | |
|---|---|---|---|
| Առնել· | Ասել· | Գիտել· | Դնել· |

Անցեալ դերբայ·

| | | | |
|---|---|---|---|
| Արարեալ· | Ասացեալ· | Գիտացեալ· | Եդեալ· |

Ապառնի դերբայ·

| | | | |
|---|---|---|---|
| Առնելոց· | Ասելոց· | Գիտելոց· | Դնելոց· |

Ներկայ·

| | | | |
|---|---|---|---|
| ըմպեմ· | լսեմ· | կարեմ· | ճանաչեմ· |

Անկատար անցեալ·

| | | | |
|---|---|---|---|
| ըմպէի· | լսէի· | կարէի· | ճանաչէի· |

Սահմանական եղանակ·

| | | | |
|---|---|---|---|
| Արբի· | լուայ· | կարացի· | Ծանեայ: |
| Արբեր· | լուար· | կարացեր· | Ծանեար· |
| Արբ, էարբ· | լուաւ· | կարաց· | Ծանեաւ· |
| Արբաք· | լուաք· | կարացաք· | Ծանեաք· |
| Արբէք· | լուայք· | կարացէք· | Ծանեայք· |
| Արբին· | լուան· | կարացին· | Ծանեան· |

Ապառնի·

| | | | |
|---|---|---|---|
| Արբից· | լուայց· | կարացից· | Ծանեայց· |
| Արբցես· | լուիցես· | կարասցես· | Ծանիցես· |
| Արբցէ· | լուիցէ· | կարասցէ· | Ծանիցէ· |
| Արբցուք· | լուիցուք· | կարասցուք· | Ծանիցուք· |
| Արբջիք· | լուիջիք· | կարասջիք· | Ծանիջիք· |
| Արբցեն· | լուիցեն· | կարասցեն· | Ծանիցեն· |

Հրամայական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Արբ. | Լուր. | Չէ գործածուիր. | Ծանիր. |
| Մի ըմպեր. | Մի լսեր. | | Մի ճանաչեր. |
| Արբէք. | Լուարուք. | | Ծաներուք. |
| Մի ըմպէք. | Մի լսէք. | | Մի ճանաչէք. |

Ստորադասական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Ըմպիցեմ. | Լսիցեմ. | Կարիցեմ. | Ճանաչիցեմ. |

Անորոշ դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Ըմպել. | Լսել. | Կարել. | Ճանաչել. |

Անցեալ դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Արբեալ. | Լուեալ. | Կարացեալ. | Ծանուցեալ. |

Ապառնի դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Ըմպելոց. | Լսելոց. | Չունի. | Ճանաչելոց. |

Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Մեղանչեմ. | Յառնեմ. | Ուտեմ. | Յանցանեմ. |

Անկատար անցեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Մեղանչէի. | Յառնէի. | Ուտէի. | Յանցանէի. |

Սահմանական կատարեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Մեղայ. | Յարեայ. | Կերայ. | Յանցեայ. |
| Մեղար. | Յարեար. | Կերար. | Յանցեար. |
| Մեղաւ. | Յարեաւ. | Կերաւ. | Յանցեաւ. |
| Մեղաք. | Յարեաք. | Կերաք. | Յանցեաք. |
| Մեղայք. | Յարեայք. | Կերայք. | Յանցեայք. |
| Մեղան. | Յարեան. | Կերան. | Յանցեան. |

Ապառնի.

| | | | |
|---|---|---|---|
| Մեղայց. | Յարեայց. | Կերայց. | Յանցեայց. |
| Մեղիցես. | Յարիցես. | Կերիցես. | Յանցիցես. |
| Մեղիցէ. | Յարիցէ. | Կերիցէ. | Յանցիցէ. |
| Մեղիցուք. | Յարիցուք. | Կերիցուք. | Յանցիցուք. |
| Մեղիջիք. | Յարիջիք. | Կերիջիք. | Յանցիջիք. |
| Մեղիցեն. | Յարիցեն. | Կերիցեն. | Յանցիցեն. |

Հրամայական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Մեղիր. | Արի. | Կեր. | Յանցիր. |
| Մի մեղանչեր. | Մի յառներ. | Մի ուտեր. | Մի յանցաներ |
| Մեղարուք. | Արիք. | Կերայք. | Յանցերուք. |
| Մի մեղանչէք. | Մի յառնէք. | Մի ուտէք. | Մի յանցանէք |

Ստորադասական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Մեղանչիցեմ. | Յառնիցեմ. | Ուտիցեմ. | Յանցանիցեմ. |

Անորոշ դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Մեղանչել. | Յառնել. | Ուտել. | Յանցանել. |

Անցեալ դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Մեղուցեալ. | Յարուցեալ. | Կերեալ. | Յանցուցեալ |

Ապառնի դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Մեղանչելոց. | Յառնելոց. | Ուտելոց. | Յանցանելոց. |

Ներկայ.

| | | |
|---|---|---|
| Լինիմ. | Եղանիմ. | Գոմ, գոս, գոյ. |
| | | Գոմք, գոյք, գոն. |

Անկատար անցեալ

| | | |
|---|---|---|
| Լինէի. | Եղանէի. | Գոյի, գոյիր գոյր. |
| | | Գոյաք, գոյիք, գոյին. |

Կատարեալ անցեալ։

| | | |
|---|---|---|
| Եղէ· | Եղէ· | Չունի· |
| Եղեր· | Եղեր· | |
| Եղեւ· | Եղեւ· | |
| Եղաք· | Եղաք· | |
| Եղէք· | Եղէք· | |
| Եղեն· | Եղեն· | |

Ապառնի·

| | | |
|---|---|---|
| Լիցիմ· | Եղէց· | Չունի· |
| Լիցիս· | Եղիցիս· | |
| Լիցի· | Եղիցի· | |
| Լիցուք· | Եղիցուք· | |
| Լիջիք· | Եղիջիք· | |
| Լիցին· | Եղիցին· | |

Հրամայական եղանակ·

| | | |
|---|---|---|
| Լեր· | Եղիջիր· | Չունի· |
| Մի լիներ· | Մի եղանիր· | |
| Լերուք· | Եղերուք· | |
| Մի լինիք· | Մի եղանիք· | |

Ստորադասական եղանակ·

| | | |
|---|---|---|
| Լինիցիմ· | Եղանիցիմ· | Գուցէ, գուցեն*· |

Անորոշ դերբայ·

| | | |
|---|---|---|
| Լինել· | Եղանել· | Գոլ։ |

Անցեալ դերբայ·

| | | |
|---|---|---|
| Լեալ· | Եղեալ· | Չունի· |

* Եղակի և յոգնակի երրորդ դէմքերն են. միւս դէմքերը գործածական չեն.

Ապառնի դերբայ·

Լինելոց· Եղանելոց· Չունի·

Ներկայ·

| | | | |
|---|---|---|---|
| Մարթիմ· | Երկնչիմ· | Թաքչիմ· | Թռչիմ· |

Անկատար անցեալ·

| | | | |
|---|---|---|---|
| Մարթէի· | Երկնչէի· | Թաքչէի· | Թռչէի· |

Սահմանական կատարեալ:

| | | | |
|---|---|---|---|
| Մարթացայ· | Երկեայ· | Թաքեայ· | Թռեայ· |
| Մարթացար· | Երկեար· | Թաքեար· | Թռեար· |
| Մարթացաւ· | Երկեաւ· | Թաքեաւ· | Թռեաւ· |
| Մարթացաք· | Երկեաք· | Թաքեաք· | Թռեաք· |
| Մարթացայք· | Երկեայք· | Թաքեայք· | Թռեայք· |
| Մարթացան· | Երկեան· | Թաքեան· | Թռեան· |

Ապառնի·

| | | | |
|---|---|---|---|
| Մարթացայց· | Երկեայց· | Թաքեայց· | Թռեայց· |
| Մարթասցիս· | Երկիցես· | Թաքիցես· | Թռիցես· |
| Մարթասցի· | Երկիցէ· | Թաքիցէ· | Թռիցէ· |
| Մարթասցուք· | Երկիցուք· | Թաքիցուք· | Թռիցուք· |
| Մարթասջիք· | Երկիջիք· | Թաքիջիք· | Թռիջիք· |
| Մարթասցին· | Երկիցեն· | Թաքիցեն· | Թռիցեն· |

Հրամայական եղանակ·

| | | | |
|---|---|---|---|
| Չունի· | Երկիր· | Թաքիր· | Թռիր· |
| | Մի երկնչիր· | Մի թաքջիր· | Մի թռջիր· |
| | Երկերուք· | Թաքերուք· | Թռերուք· |
| | Մի երկնչիք· | Մի թաքջիք· | Մի թռչիք· |

Ստորադասական եղանակ·

| | | | |
|---|---|---|---|
| Մարթայցեմ· | Երկնչիցիմ· | Թաքչիցիմ· | Թռչիցիմ· |

Անորոշ դերբայ·

| | | | |
|---|---|---|---|
| Մարթել· | Երկնչել· | Թաքչել· | Թռչել· |

Անցեալ դերբայ·

| | | | |
|---|---|---|---|
| Մարթացեալ· | Երկուցեալ· | Թաքուցեալ· | Թռուցեալ· |

Ապառնի դերբայ·

| | | | |
|---|---|---|---|
| Չունի· | Երկնչելոց· | Թաքչելոց· | Թռչելոց· |

Ներկայ·

| | | | |
|---|---|---|---|
| կորնչիմ· | Հանգչիմ· | Մատչիմ· | Մարտնչիմ· |

Անկատար անցեալ·

| | | | |
|---|---|---|---|
| կորնչէի· | Հանգչէի· | Մատչէի· | Մարտնչէի· |

Սահմանական կատարեալ·

| | | | |
|---|---|---|---|
| կորեայ· | Հանգեայ· | Մատեայ· | Մարտեայ· |
| կորեար· | Հանգեար· | Մատեար· | Մարտեար· |
| կորեաւ· | Հանգեաւ· | Մատեաւ· | Մարտեաւ· |
| կորեաք· | Հանգեաք· | Մատեաք· | Մարտեաք· |
| կորեայք· | Հանգեայք· | Մատեայք· | Մարտեայք· |
| կորեան· | Հանգեան· | Մատեան· | Մարտեան· |

Ապառնի·

| | | | |
|---|---|---|---|
| կորեայց· | Հանգեայց· | Մատեայց· | Մարտեայց· |
| կորիցես· | Հանգիցես· | Մատիցես· | Մարտիցես· |
| կորիցէ· | Հանգիցէ· | Մատիցէ· | Մարտիցէ· |
| կորիցուք· | Հանգիցուք· | Մատիցուք· | Մարտիցուք· |
| կորիջիք· | Հանգիջիք· | Մատիջիք· | Մարտիջիք· |
| կորիցեն· | Հանգիցեն· | Մատիցեն· | Մարտիցեն· |

### Հրամայական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| կորիր· | Հանգիր· | Մատիր· | Մարտիր· |
| Մի կորնչիր· | Մի հանգչիր· | Մի մատչիր· | Մի մարտնչիր |
| կորերուք· | Հանգերուք· | Մատերուք· | Մարտերուք· |
| Մի կորնչիք· | Մի հանգչիք· | Մի մատչիք· | Մի մարտնչիք |

### Ստորադասական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| կորնչիցիմ· | Հանգչիցիմ· | Մատչիցիմ· | Մարտնչիցիմ· |

### Անորոշ դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| կորնչել։ | Հանգչել։ | Մատչել։ | Մարտնչել։ |

### Անցեալ դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| կորուսեալ· | Հանգուցեալ։ | Մատուցեալ։ | Մարտուցեալ· |

### Ապառնի դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| կորնչելոց· | Հանգչելոց· | Մատչելոց· | Մարտնչելոց· |

### Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| փախչիմ· | Ընդունիմ· | Ունիմ· | Տանիմ· |

### Անկատար անցեալ։

| | | | |
|---|---|---|---|
| փախչէի· | Ընդունէի· | Ունէի· | Տանէի· |

### Սահմանական կատարեալ։

| | | | |
|---|---|---|---|
| փախեայ· | Ընկալայ· | Կալայ· | Տարայ· |
| փախեար· | Ընկալար· | Կալար· | Տարար· |
| փախեաւ· | Ընկալաւ· | Կալաւ· | Տարաւ· |
| փախեաք· | Ընկալաք· | Կալաք· | Տարաք· |
| փախեայք· | Ընկալայք· | Կալայք· | Տարայք· |
| փախեան· | Ընկալան· | Կալան· | Տարան· |

### Ապառնի·

| | | | |
|---|---|---|---|
| փախեայց· | Ընկալայց· | Կալայց· | Տարայց· |
| փախիցես· | Ընկալցիս· | Կալցիս· | Տարցիս· |
| փախիցէ· | Ընկալցի· | Կալցի· | Տարցի· |
| փախիցուք· | Ընկալցուք· | Կալցուք· | Տարցուք· |
| փախիջիք· | Ընկալջիք· | Կալջիք· | Տարջիք· |
| փախիցեն· | Ընկալցին· | Կալցին· | Տարցին· |

### Հրամայական եղանակ·

| | | | |
|---|---|---|---|
| փախիր· | Ընկալ· | Կալ, կա· | Տար· |
| Մի փախչիր· | Մի ընդունիր· | Մի ունիր· | Մի տանիր· |
| փախերուք· | Ընկալարուք· | Կալարուք· | Տարայք· |
| Մի փախչիք· | Մի ընդունիք· | Մի ունիք· | Մի տանիք· |

### Ստորադասական եղանակ·

| | | | |
|---|---|---|---|
| փախչիցիմ· | Ընդունիցիմ· | Ունիցիմ· | Տանիցիմ· |

### Անորոշ դերբայ·

| | | | |
|---|---|---|---|
| փախչել· | Ընդունել· | Ունել· | Տանել· |

### Անցեալ դերբայ·

| | | | |
|---|---|---|---|
| փախուցեալ· | Ընկալեալ· | Կալեալ· | Տարեալ· |

### Ապառնի դերբայ·

| | | | |
|---|---|---|---|
| փախչելոց· | Ընդունելոց· | Ունելոց· | Տանելոց· |

---

### Սահմանական Ներկայ·

| | | | |
|---|---|---|---|
| Գամ· | Երթամ· | Լամ· | կամ· |
| Գաս· | Երթաս· | Լաս· | կաս· |
| Գայ· | Երթայ· | Լայ· | կայ· |

| | | | |
|---|---|---|---|
| Գամք· | Երթամք· | Լամք· | կամք· |
| Գայք· | Երթայք· | Լայք· | կայք· |
| Գան· | Երթան· | Լան· | կան· |

Անկատար անցեալ:

| | | | |
|---|---|---|---|
| Գայի· | Երթայի· | Լայի· | կայի· |
| Գայիր· | Երթայիր· | Լայիր· | կայիր· |
| Գայր· | Երթայր· | Լայր· | կայր· |
| Գայաք· | Երթայաք· | Լայաք· | կայաք· |
| Գայիք· | Երթայիք· | Լայիք· | կայիք· |
| Գային· | Երթային· | Լային· | կային· |

Սահմանական կատարեալ:

| | | | |
|---|---|---|---|
| Եկի· | Չոգայ· | Լացի· | կացի· |
| Եկիր· | Չոգար· | Լացեր· | կացեր· |
| Եկն· | Չոգաւ· | Լաց, ելաց· | կաց, եկաց· |
| Եկաք· | Չոգաք· | Լացաք· | կացաք· |
| Եկայք· | Չոգայք· | Լացէք· | կացէք· |
| Եկին· | Չոգան· | Լացին· | կացին· |

Ապառնի·

| | | | |
|---|---|---|---|
| Եկից· | Երթայց· | Լացից· | կացից· |
| Եկեսցես· | Երթիցես· | Լացցես· | կացցես· |
| Եկեսցէ· | Երթիցէ· | Լացցէ· | կացցէ· |
| Եկեսցուք· | Երթիցուք· | Լացցուք· | կացցուք· |
| Եկեսջիք· | Երթիջիք· | Լացջիք· | կացջիք· |
| Եկեսցեն· | Երթիցեն· | Լացցեն· | կացցեն· |

Հրամայական եղանակ·

| | | | |
|---|---|---|---|
| Եկ· | Երթ· | Լաց· | կաց· |
| Մի գար· | Մի երթար· | Մի լար· | Մի կար· |

| | | | |
|---|---|---|---|
| Եկայք· | Երթայք· | Լացէք· | Կացէք· |
| Մի գայք· | Մի երթայք· | Մի լայք· | Մի կայք· |

Ստորադասական եղանակ·

| | | | |
|---|---|---|---|
| Գայցեմ· | Երթայցեմ· | Լայցեմ· | Կայցեմ· |

Անորոշ դերբայ·

| | | | |
|---|---|---|---|
| Գալ· | Երթալ· | Լալ· | Կալ· |

Անցեալ դերբայ·

| | | | |
|---|---|---|---|
| Եկեալ· | Երթեալ· | Լացեալ· | Կացեալ· |

Ապառնի դերբայ·

| | | | |
|---|---|---|---|
| Գալոց· | Երթալոց· | Լալոց· | Կալոց· |

Սահմանական ներկայ·

| | | | |
|---|---|---|---|
| Կեամ· | Տամ· | Այտնում· | Երդնում· |
| Կեաս· | Տաս· | Այտնուս· | Երդնուս· |
| Կեայ· | Տայ· | Եւայլն· | Եւայլն· |
| Կեամք· | Տամք· | | |
| Կեայք· | Տայք· | | |
| Կեան· | Տան· | | |

Անկատար անցեալ

| | | | |
|---|---|---|---|
| Կէի· | Տայի· | Այտնուի· | Երդնուի· |
| Կէիր· | Տայիր· | Այտնուիր· | Երդնուիր· |
| Կեայր· | Տայր· | Եւայլն· | Եւայլն· |
| Կէաք· | Տայաք· | | |
| Կէիք· | Տայիք· | | |
| Կէին· | Տային· | | |

Սահմանական կատարեալ։

| | | | |
|---|---|---|---|
| կեցի. | Ետու. | Այտեայ. | Երդուայ. |
| կեցեր. | Ետուր. | Այտեար. | Երդուար. |
| եկեաց. | Ետ. | Այտեաւ. | Երդուաւ. |
| կեցաք. | Տուաք. | Այտեաք. | Երդուաք. |
| կեցէք. | Ետուք. | Այտեայք. | Երդուայք. |
| կեցին. | Ետուն. | Այտեան. | Երդուան. |

Ապառնի.

| | | | |
|---|---|---|---|
| կեցից. | Տաց. | Այտեայց. | Երդուայց. |
| կեցցես. | Տացես. | Այտիցես. | Երդուիցես. |
| կեցցէ. | Տացէ. | Այտիցէ. | Երդուիցէ. |
| կեցցուք. | Տացուք. | Այտիցուք. | Երդուիցուք. |
| կեցջիք. | Տաջիք. | Այտիջիք. | Երդուիջիք. |
| կեցցեն. | Տացեն. | Այտիցեն. | Երդուիցեն. |

Հրամայական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| կեաց. | Տուր. | Այտիր. | Երդուիր. |
| Մի կեար. | Մի տար. | Մի այտնուր. | Մի երդնուր. |
| կեցէք. | Տուք. | Այտերուք. | Երդուարուք. |
| Մի կեայք. | Մի տայք. | Մի այտնուք. | Մի երդնուք. |

Ստորադասական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| կեայցեմ. | Տայցեմ. | Այտնուցում. | Երդնուցում. |

Աներոշ դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| կեալ. | Տալ. | Այտնուլ. | Երդնուլ. |

Անցեալ դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| կեցեալ. | Տուեալ. | Այտուցեալ. | Երդուեալ. |

Ապառնի դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| կելոց. | Տալոց. | Այտնլոց. | Երդնլոց. |

Ներկայ

| | | | |
|---|---|---|---|
| Զարթնում· | Ոստնում· | Ցասնում· | Քաղցնում· |

Անկատար անցեալ։

| | | | |
|---|---|---|---|
| Զարթնուլի· | Ոստնուլի· | Ցասնուլի· | Քաղցնուլի· |

Սահմանական կատարեալ։

| | | | |
|---|---|---|---|
| Զարթեայ· | Ոստեայ· | Ցասեայ· | Քաղցեայ· |
| Զարթեար· | Ոստեար· | Ցասեար· | Քաղցեար· |
| Զարթեաւ· | Ոստեաւ· | Ցասեաւ· | Քաղցեաւ· |
| Զարթեաք· | Ոստեաք· | Ցասեաք· | Քաղցեաք· |
| Զարթեայք· | Ոստեայք· | Ցասեայք· | Քաղցեայք· |
| Զարթեան· | Ոստեան· | Ցասեան· | Քաղցեան· |

Ապառնի·

| | | | |
|---|---|---|---|
| Զարթեայց· | Ոստեայց· | Ցասեայց· | Քաղցեայց· |
| Զարթիցես· | Ոստիցես· | Ցասիցես· | Քաղցիցես· |
| Զարթիցէ· | Ոստիցէ· | Ցասիցէ· | Քաղցիցէ· |
| Զարթիցուք· | Ոստիցուք· | Ցասիցուք· | Քաղցիցուք· |
| Զարթիջիք· | Ոստիջիք· | Ցասիջիք· | Քաղցիջիք· |
| Զարթիցեն· | Ոստիցեն· | Ցասիցեն· | Քաղցիցեն· |

Հրամայական եղանակ·

| | | | |
|---|---|---|---|
| Զարթիր· | Ոստիր· | Ցասիր· | Քաղցիր· |
| Մի զարթնուր· | Մի ոստնուր· | Մի ցասնուր· | Մի քաղցնուր· |
| Զարթիք· | Ոստերուք· | Ցասերուք· | Քաղցերուք· |
| Մի զարթնուք· | Մի ոստնուք· | Մի ցասնուք· | Մի քաղցնուք· |

Ստորադասական եղանակ·

| | | | |
|---|---|---|---|
| Զարթնուցում· | Ոստնուցում· | Ցասնուցում· | Քաղցնուցում· |

Անորոշ դերբայ.

Զարթնուլ. Ուսանուլ. Ցասնուլ. Փաղչնուլ.

Անցեալ դերբայ.

Զարթուցեալ. Ուսուցեալ. Ցասուցեալ. Փաղչեալ.

Ապառնի դերբայ.

Զարթնլոց. Ուսանլոց. Ցասնլոց. Փաղչնլոց.

## ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐՈՒՆ ԿՐԱՒՈՐԱԿԱՆԸ

Ներկայ.

Առնիմ. Ասիմ. Գիտիմ. Դնիմ.

Անկատար անցեալ.

Առնէի. Ասէի. Գիտէի. Դնէի.

Սահմանական կատարեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Արարայ. | Ասացայ. | Գիտացայ. | Եդայ. |
| Արարար. | Ասացար. | Գիտացար. | Եդար. |
| Արարաւ. | Ասացաւ. | Գիտացաւ. | Եդաւ. |
| Արարաք. | Ասացաք. | Գիտացաք. | Եդաք. |
| Արարայք. | Ասացայք. | Գիտացայք. | Եդայք. |
| Արարան. | Ասացան. | Գիտացան. | Եդան. |

Ապառնի.

| | | | |
|---|---|---|---|
| Արարայց. | Ասացայց. | Գիտացայց. | Եդայց. |
| Արասցիս. | Ասասցիս. | Գիտասցիս. | Դիցիս. |
| Արասցի. | Ասասցի. | Գիտասցի. | Դիցի. |
| Արասցուք. | Ասասցուք. | Գիտասցուք. | Դիցուք. |
| Արասջիք. | Ասասջիք. | Գիտասջիք. | Դիջիք. |
| Արասցին. | Ասասցին. | Գիտասցին. | Դիցին. |

Հրամայական եղանակ.

Առնիջիր. Ասիջիր. Գիտացիր. Դնիջիր.
Մի առնիր. Մի ասիր. Մի գիտիր. Մի դնիր.
Առնիջիք. Ասացարուք. Գիտացարուք. Եդարուք.
Մի առնիք. Մի ասիք. Մի գիտիք. Մի դնիք.

Ստորադասական եղանակ.

Առնիցիմ. Ասիցիմ. Գիտիցիմ. Դնիցիմ.

Անորոշ դերբայ.

Առնել (իլ) Ասել (իլ) Գիտել (իլ) Դնել (իլ)

Անցեալ դերբայ.

Արարեալ. Ասացեալ. Գիտացեալ. Եդեալ.

Ապառնի դերբայ.

Առնելի. Ասելի. Գիտելի. Դնելի.

Ներկայ

Ըմպիմ. Ճանաչիմ. Պարտիմ.

Անկատար անցեալ.

Ըմպէի. Ճանաչէի. Պարտէի.

Սահմանական կատարեալ.

Արբայ. Ծանուցայ. Չունի.
Արբար. Ծանուցար.
Արբաւ. Ծանուցաւ.
Արբաք. Ծանուցաք.
Արբայք. Ծանուցայք.
Արբան. Ծանուցան.

Ապառնի.

Արբայց. Ծանուցայց. Չունի.
Արբցիս. Ծանուսցիս.
Արբցի. Ծանուսցի.
Արբցուք Ծանուսցուք.
Արբջիք. Ծանուսջիք.
Արբցին. Ծանուսցին.

Հրամայական եղանակ.

Արբիր. Ծանուցիր. Չունի.
Մի ըմպիր. Մի ճանաչիր.
Արբերուք. Ծանուցարուք.
Մի ըմպիք. Մի ճանաչիք.

Ստորադասական եղանակ.

Ըմպիցիմ. ճանաչիցիմ. Պարտիցիմ.

Անորոշ դերբայ.

Ըմպել. (իլ) ճանաչել. (իլ) Պարտել. (իլ)

Անցեալ դերբայ.

Արբեալ. Ծանուցեալ. Չունի.

Ապառնի դերբայ.

Ըմպելի. ճանաչելի. Չունի.

Ներկայ.

Ուտիմ. Լսիմ. Տուեալ լինիմ.

Անկատար անցեալ.

Ուտէի. Լսէի. Տուեալ լինէի.

Կատարեալ անցեալ։

կերեալ եղէ· Լուեալ եղէ· Տուայ, Տուար, Տուաւ․
․ Տուաք, Տուայք, Տուան․

Ապառնի․

կերեալ եղէց· Լուեալ եղէց· Տուայց, Տացիս, Տացէ․
Տացուք, Տաջիք, Տացին․

Հրամայական եղանակ․

կերեալ լեր· Լուեալ լեր· Տուեալ լեր, եւայլն․
Մի ուտիր· Մի լուիր·
կերեալ լերուք·Լուեալ լերուք·
Մի ուտիք· Մի լուիք·

Ստորադասական եղանակ․

Ուտիցիմ· Լուիցիմ· Տայցիմ·

Անորոշ դերբայ·

Ուտել (իլ) Լուել (իլ) Տուեալ լինել

Անցեալ դերբայ·

կերեալ Լուեալ Տուեալ

Ապառնի դերբայ·

Ուտելի· Լուելի· Տալի·

## ԲԱՅԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԴԻՏԵԼԻՔ

74· Եմ և իմ վերջաւորած բայերէն ոմանց Անցեալ դերբայը եցեալ կ'ըլլայ․ զոր օրինակ կոչեմ, կոչեալ կամ կոչեցեալ․ խօսիմ․ խօսեալ կամ խօսեցեալ։

75· Ածեմ, բերեմ, հանեմ բայերը՝ անեմ վերջաւորած բայերուն պէս կը խոնարհին․ զոր

օրինակ, կատարեալ՝ Ածէ, բերէ, հանէ. Ապառնի՝ Ածէց, բերէց, հանէց. Հրամայական՝ Ած, բեր, հան: Նոյնպէս՝ Նստիմ, կ՚ըլլայ կատարեալ՝ Նստայ. Ապառնի՝ Նստայց. Հրամայական՝ Նիստ:

76. Հարկանեմ բային կ գիրը կատարեալին, Ապառնւոյն, Հրամայականին և Անցեալ դերբային մէջ կը կորսուի. զոր օրինակ, Հարէ, հարէց, հար, հարեալ:

77. Հոգամ, յուսամ, որսամ, ցնծամ բայերուն կատարեալն ու ապառնին կ՚ըլլան, Հոգացայ, յուսացայ, որսացայ, ցնծացայ. Հոգացայց, յուսացայց, որսացայց, ցնծացայց. փոխանակ հոգացէ, ցնծացէ, եայլն ըսելու: Բայց հրամայականները կ՚ըլլան. Հոգա, յուսա, որսա, ցնծա:

78. Առնում, զբօսնում բայերուն կատարեալին, Ապառնւոյն, Հրամայականին և Անցեալ դերբային մէջ ն գիրը կը կորսուի. զոր օրինակ Առնում. կատարեալ՝ Առէ. ապառնի՝ Առէց. հրամայական՝ Առ. անցեալ՝ Առեալ. Զբօսնում. կատարեալ՝ Զբօսայ, ապառնի՝ Զբօսայց. հրամայական՝ Զբօսիր. անցեալ՝ Զբօսեալ:

79. Լնում, խնում, յենում, զգենում, ընկենում, ընթեռնում բայերուն ալ ն գիրը նոյն ժամանակներուն մէջ ցի կը փոխուի, այսպէս. լցի, լցից, լից, լցեալ. Խցի, խցից, խից, խցեալ.

Յեցայ, յեցայց, յեցիր, յեցեալ. Զգեցայ, զգեցայց, զգեցիր, զգեցեալ. Ընկեցի, ընկեցից, ընկեա, ընկեցեալ. Ընթերցայ, ընթերցայց, ընթերցիր, ընթերցեալ։

## ԴԵՐԲԱՅՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ

80. Բայերուն Անորիշ դերբայները մինակ եզակի կը հոլովին, այսպէս.

Ա. Լծ. Սիրել, սիրելոյ, սիրելով. Հատանել, հատանելոյ, հատանելով։

Բ. Լծ. Խօսել, խօսելոյ, խօսելով. Ուսանել, ուսանելոյ, ուսանելով։

Գ. Լծ. Աղալ, աղալոյ, աղալով. Գողանալ, գողանալոյ, գողանալով։

Դ. Լծ. Թողուլ, թողլոյ, թողլով։

81. Անցեալ դերբայները շատ անգամ իբր ածական կը գործածուին, և, թէ եզակի թէ յոգնակի, կը հոլովին այսպէս։

Ա. Լծ. Սիրեալ, սիրելոյ, սիրելով. Սիրեալք, սիրելոց, սիրելովք։

Հատեալ, հատելոյ, հատելով. Հատեալք, հատելոց, հատելովք։

Բ. Լծ. Խօսեալ, խօսելոյ, խօսելով. Խօսեալք, խօսելոց, խօսելովք։

Ուսեալ, ուսելոյ, ուսելով. Ուսեալք, ուսելոց, ուսելովք։

Գ. Լծ. Աղացեալ, աղացելոյ, աղացելով. Աղացեալք, աղացելոց, աղացելովք։

Գողացեալ, գողացելոյ, գողացելով. Գողացեալք, գողացելոց, գողացելովք։

Դ· Լծ· Թողեալ , Թողելոյ , Թողելով · Թողեալք , Թողելոց , Թողելովք ։

82· Անցեալ և Ապառնի դերբայները էական բային եմ, էի, իցեմ ժամանակներով խոնարհելով, քանի մը բաղադրեալ ժամանակներ կը կազմեն, որ օրինակ ·

| | |
|---|---|
| Յարակատար | Ներկայ ապառնի· |
| Սիրեալ-եմ· սիրած եմ· | Սիրելոց-եմ· պիտի սիրեմ· |
| » -ես· | » -ես· |
| » -է· | » -է· |
| » -եմք· | » -եմք· |
| » -էք· | » -էք· |
| » -են· | » -են· |
| Գերակատար· | Անկատար ապառնի· |
| Սիրեալ-էի· սիրած էի· | Սիրելոց-էի· պիտի սիրէի· |
| » -էիր· | » -էիր· |
| » -էր· | » -էր· |
| » -էաք· | » -էաք· |
| » -էիք· | » -էիք· |
| » -էին· | » -էին· |
| Ստորադասական անցեալ | Ստորադասական ապառնի· |
| Սիրեալ-իցեմ· սիրած եմ. | Սիրելոց-իցեմ· պիտի սիրեմ. |
| » -իցես· | » -իցես· |
| » -իցէ· | » -իցէ· |
| » -իցեմք· | » -իցեմք· |
| » -իցէք· | » -իցէք· |
| » -իցեն· | » -իցեն· |

# ԳԼՈՒԽ Զ.

## ՄԱԿԲԱՅ

83. Մակբայ կ՚ըսուին այն բառերը որոնք բային մէկ որպիսութիւնը կամ պարագան կը ցուցնեն, ինչպէս որ ածականը գոյականին որպիսութիւնը կը ցուցնէ. զոր օրինակ Յոյժ ըմպել, շատ խմել. Բարւոք խօսել, աղէկ խօսիլ։ Յոյժ, շատ, և Բարւոք, աղէկ՝ մակբայ են. առաջինը՝ ըմպել բային, երկրորդը՝ խօսել բային մէյմէկ որպիսութիւնը կը ցուցնեն։

Սովորական մակբայները հետեւեալներն են.

Յոյժ. Կարի. } խիստ, շատ.

Բարւոք. աղէկ.

Չարաչար. գէշ.

Տարապարտուց. անիրաւ տեղը.

Իսկոյն. Իսկ և իսկ. Ընդէն և անդ. } անմիջապէս. մէկէն.

Զուր. Վայրապար. } պարապ տեղը.

Գաղտ. գաղտուկ.

Յանկարծ. Յեղակարծումն. } յանկարծ.

Եւեթ. մինակ.

Ձրի. ձրի (առանց ստակի)

Նախ. նախ.

Եւս, եւ. նաեւ, ալ.

Զառաջինն. Ի սկզբան. } առաջ.

Ստէպ. Յաճախ. } շատ անգամ.

Յառաջագոյն. առաջ.

Դուն ուրեք. քիչ անգամ.

Վաղու. Վաղուց. } շատոնց.

Արդարեւ. իրաւ.

Կանխաւ. առաջուց.

Ապաքէն. անշուշտ.

Մերթ մերթ. երբեմն երբեմն.

Այժմ. Արդ. } հիմա.

Երբէք, երբէք. ատեն, ատեն.

Յետոյ · } ետքը ·
Ապա · }

Այսօր · այսօր ·

Վաղիւ · վաղը ·

Երեկ · երէկ ·

Յեռանդ · երէկ չէ առջի օր ·

Ընդ առաւօտն առտուան դէմ ·

Ընդ երեկս · իրիկուան դէմ ·

Այգուն · առտուանց ·

Երեկոյին · իրիկուանը ·

Գիշերի · գիշերը ·

Հերուն · անցած տարի ·

Կանուխ · կանուխ ·

Անագան · ուշ ·

Վաղ · առաջ, կանուխ ·

Վաղվաղակի · }
Փութապէս · } շուտով ·
Փութանակի · }

Ի ներքս · } ներս · տակը ·
Ի ներքոյ · }

Ի վեր · վեր ·

Ի վերուստ · վերէն ·

Ի վերայ · վրան ·

Շուրջ · } բոլորտիքը ·
Շուրջանակի · }

Ուրեք · տեղ մը ·

Ուստեք · տեղէ մը ·

Միանգամ · անգամ մը ·

Միանգամայն · մէկէն ·

Միւսանգամ · } նորէն ·
Վերստին · }

Յայտ · } յայտնի ·
Յայտնապէս · }

Ի ծածուկ · ծածուկ ·

Երբեմն · երբեմն · ատենօք ·

Մանաւանդ · մանաւանդ ·

Թերեւս · գուցէ · կարելի է ·

Գուցէ · չըլլայ թէ ·

Արդեօք · արդեօք ·

Միթէ · միթէ · մի° ·

Աստ · } հոս ·
Այսր · }

Անդ · } հոն ·
Անդր · }

Աստի · ասկէ ·

Անտի · անկէ ·

Արտաքս · } դուրս ·
Արտաքոյ · }

Ի վեր · վեր ·

Որպէս · } ինչպէս ·
Զիարդ · }

Ընդէ՞ր · } ինչո՞ւ համար ·
Զի՞ · }

Յո՞ · } ո՞ւր ·
Ո՞ւր · }

Ե՞րբ · ե՞րբ ·

Ուստի՞ · ո՞ւրկէ ·

Ոչ · } ոչ չ
Մի · }

## ԳԼՈՒԽ Է.

### ՇԱՂԿԱՊ

84. Շաղկապ կ՚ըսուին այն բառերը որոնք երկու բառ կամ խօսք իրարու հետ կը կապեն, զոր օրինակ. Հայր իմ և մայր իմ. Հայրս ու մայրս. Յիւրսն եկն և իւրքն զնա ոչ ընկալան. Իրեններուն եկաւ ու իրենները զայն չընդունեցան: Այս խօսքերուն մէջ և, ու, շաղկապ են. առջի խօսքին մէջ և՝ հայր, մայր բառերն իրարու հետ կը կապէ. երկրորդին մէջ՝ և շաղկապին կապածը՝ երկու խօսք է:

Գլխաւոր շաղկապներն են հետեւեալները.

Եւ. ու. ալ:
Բայց. բայց.
Այլ. այլ. հապա.
Զի. վասն զի. որովհետեւ զի. որ.
Քանզի. քանզի. ինչու որ.
Վասն զի. } որովհետեւ.
Որովհետեւ. }
Արդ. } արդ.
Եւ արդ. }
Ապա. } ուրեմն. անանկ է նէ.
Ուրեմն. }
Ուստի. ուստի.
Իբրեւ. } երբ.
Յորժամ. }
Մինչ. } երբ. ատենը.
Մինչդեռ. }
Սակայն. սակայն.
Թէպէտեւ. թէպէտ.
Եթէ. } եթէ. որ.
Թէ. }
Կամ. կամ.
Իսկ. ալ. բայց.

# ԳԼՈՒԽ Ը.

## ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ

85. Ձայնարկութիւն կամ միջարկութիւն կ'ըսուին այն բառերը որոնք կիրք մը կը յայտնեն. զոր օրինակ. վախ, զարմանք, բարկութիւն, զզուանք, արհամարհութիւն, ցաւ, եւայլն:

Գլխաւոր ձայնարկութիւնները հետեւեալներն են:

Ո՜վ. } օ՜վ. զարմանք ցուցնող.
Ո՜

Ո՜հ. օ՜հ. տրտմութիւն, վիշտ ցուցնող.

Վա՜հ. վա՜հ. արհամարհանք ցուցնող.

Վա՜շ. վա՜շ. օ՜խ. վրէժխնդրութիւն ցուցնող.

Բա՜բէ. բա՜բէ. զարմանք, ցաւ կամ ապաշաւ ցուցնող.

Եղո՜ւկ. } աւա՜ղ. գութ, ցաւակցութիւն ցուցնող.
Աւա՜ղ.

Հա՜պա. } օ՜ն. խրախոյս ցուցնող.
Օ՜ն.

Օն անդր.
Փարգաստ. } Աստուած չընէ. մերժում, սոսկում ցուցնող.
Քաւ լիցի.

Ա՜յ. ա՜յ. բարկութիւն, թշնամանք ցուցնող.

Է՜. օ՜վ. մէկը կանչելու համար.

Երանի՜. երանի՜. երանութիւն տալու համար.

Իցի՜ւ. } իղձ, բաղձանք ցուցնելու համար.
Իցէ՜ թէ.

Վա՜յ. վա՜յ. վայ կարդալու համար.

Ազնի՜ւ. ազնի՜ւ. գովելու համար.

# ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

## ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

86. Համաձայնութիւնը կը սորվեցնէ թէ խօսք մը ինչ բաներէ կը կազմուի։

87. Խօսքի մը մէջ պէտք է որ դիմաւոր բայ մը ըլլայ։

Աստուած արար զերկինս և զերկիր. Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց.

Ասիկա խօսք մըն է, քանզի դիմաւոր բայ կայ որ է արար, ստեղծեց։

Ասաց Աստուած. Եղիցի լոյս, և եղև լոյս. Աստուած ըսաւ. Թող լոյս ըլլայ. և լոյսը եղաւ.

Ասոր մէջ երեք խօսք կայ, քանզի երեք դիմաւոր բայ կայ. ասաց, ըսաւ. եղիցի, ըլլայ. եղև, եղաւ։

88. Խօսքի մը մէջ բայէն զատ՝ կը գտնուին Տէր բայի, Կոչական, Խնդիր, Յատկացուցիչ ու Բացայայտիչ։

### Ա. ՏԷՐ ԲԱՅԻ

89. Տէր բայի կ'ըսուի այն ուղղական հոլովը որ բային գործողութիւնը ընողն է, և բային հետ թուով ու դէմքով կը համաձայնի. զոր օրինակ. — Աստուած արար զերկինս և զերկիր — ։ Այս խօսքին մէջ Աստուած ուղղական հոլովը արար բային Տէր բայն է, քանզի ընողը

կամ ստեղծողն Աստուած է, և բային հետ թուով ու դէմքով համաձայնած է ։

90. Խօսքի մը մէջ տէր բային դիւրաւ կը ճանչցուի, եթէ ո՞վ հարցումն ընենք. զոր օրինակ, վերի խօսքին մէջ. — ո՞վ ստեղծեց.— Աստուած. — ապա Աստուած տէր բայի է։

91. Երբ բայը քանի մը Տէր բայի ունի, բայը Յոքնակի կը դրուի. զոր օրինակ.

Նոյ և որդիք նորա մտին ՚ի տապանն. Նոյ և անոր որդիքը տապանը մտան ։ Ո՞վ մտաւ. —Նոյ և որդիքը. ապա՝ Նոյ և որդիք նորա տէր բայի են ։

92. Եթէ Տէր բայիները տարբեր դէմքի բառեր են, բայը Յոքնակի կը դրուի, և նախապատիւ դէմքին հետ կը համաձայնի ։ Առաջին դէմքը Երկրորդէն նախապատիւ է. Երկրորդն ալ Երրորդէն. այսպէս կ՚ըսուի.

Ես և հայր իմ մի եմք ։

Յորժամ դու և նա միայն էիք ։

93. Տէր բային ենթական կամ ուղղական հոլով կը դրուի ։

Երբ և շաղկապով կապուած երկու բայ մի և նոյն Տէր բային ունին, և շաղկապը զանց ընելով առաջին բայը կընայ անցեալ դերբայի փոխուիլ. անատեն Տէր բային ենթական կը դրուի.

Տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ. Յիսուս անոնց հաւատքը տեսնելով կ՚ըսէ ։ փոխանակ ըսելու՝ Ետես Յիսուս զհաւատս նոցա և ասէ ։

Անցեալ դերբայով և էական բայով շինուած ժամանակներու, այսինքն՝ Յարակատարի, Գերակատարի, Ստորադասական անցեալի (Տես Հմր. 82) եղակի երրորդ դէմքերը սեռական տէր բայիով ամէն դէմքի տեղ կը գործածուին: Այսպէս կ՚ըսուի.

Տեսեալ է իմ, քո, նորա, եղբօր իմոյ. փոխանակ ըսելու՝ Տեսեալ եմ ես, տեսեալ ես դու, տեսեալ է նա, տեսեալ է եղբայր իմ: Այսպէս կ՚ըլլան նաև յոքնակիները և ուրիշ բաղադրեալ ժամանակներ, զորօրինակ,

Տեսեալ է մեր, ձեր, նոցա եւայլն. փոխանակ ըսելու՝ Տեսեալ եմք մեք, եւայլն:

Տեսեալ էր իմ, քո, նորա եւայլն. Տեսեալ իցէ իմ, քո, նորա, մեր, ձեր, նոցա եւայլն:

Եթէ իմ չէր եկեալ, Եթէ ես եկած չըլլայի: փոխանակ՝ Եթէ ես ոչ էի եկեալ:

Հրէից երդուեալ էր սպանանել զՊաւղոս, Հրեաները երդում ըրած էին զՊօղոս սպաննելու: փոխանակ՝ Հրէայք երդուեալ էին սպանանել եւայլն:

Երբ երկու խօսք զի, թէ շաղկապով կապուած են, այն շաղկապները զանց ընելով երկրորդ խօսքին բայը կրնայ Անորոշ դերբայի փոխուիլ, և անատեն տէր բային տրական կը դրուի. զոր օրինակ.

Ոչ կամիմք թագաւորել դմա ի վերայ մեր. Չենք ուզեր որ ասիկա մեր վրայ թագաւորէ: փոխանակ ըսելու՝ Ոչ կամիմք զի թագաւորեսցէ դա 'ի վերայ մեր:

Ոչ տամք թոյլ անցանել ձեզ ընդ երկիր մեր . Չենք թողուր որ մեր երկրէն անցնիք ։ փոխանակ՝ Ոչ տամք թոյլ զի անցանիցէք ընդ եւայլն ։

94. Դերանուն ածէր բայերը հայերէնի մէջ սովորաբար զօրութեամբ կ'իմացուին . ուստի կ'ըսուի , սիրեմ , գործեաց , երթիցէ , արարցուք , ընկալարուք , առնէին . աս բայերուն դերանուն ածէր բայերը ես . դու , նա , մեք , դուք , նոքա , զօրութեամբ կ'իմացուին ։

### Բ. ԿՈՉԱԿԱՆ

95. Կոչականը ուղղական հոլով մըն է , երկրորդ դէմքի անձ մը կը ցուցնէ առ որ խօսքը կ'ուղղուի . զոր օրինակ .

Լուր , որդեակ , խրատու հօր քո . Որդեակ , քու հօրդ խրատը մտիկ ըրէ ։ Ղազարէ , արի , եկ արտաքս . Ղազարոս , ել , դուրս եկուր ։ Աղջիկ դու , քեզ ասեմ , արի . Աղջիկ , քեզի կ'ըսեմ , ել ։ Ով անմիտք և հեղգամիտք 'ի հաւատալ . Ով անմիտներ և սրտով դանդաղներ հաւատալու ։

Աս խօսքերուն մէջ՝ որդեակ , Ղազարէ , Աղջիկ դու , ով անմիտք և հեղգամիտք բառերը կոչական են , և երկրորդ դէմքի անձի մը ուղղուած են ։

### Գ. ԽՆԴԻՄ

96. Բայերը իրենց նշանակութիւնը լրացնելու համար , առանց նախադրութեան և

նախադրութեամբ այլ և այլ հոլով բառեր կ'ուզեն, որոնք խնդիր կը կոչուին ։

97. Ուղղական խնդիր ։ Էական բային և ուրիշ քանի մը բայերու հետ՝ տէր բայէն զատ ուրիշ ուղղական հոլով մը կ'ըլլայ, որ տէր բային ինչ ըլլալը կը ցուցնէ. աս ուղղականին կ'ըսուի ուղղական խնդիր կամ ստորոգելի. զոր օրինակ.

Ես եմ որդի քո. Ես քու որդիդ եմ.

Աս խօսքին մէջ երկու ուղղական կայ, Ես և որդի. Ես տէր բայն է, որդի՝ ուղղական խնդիր՝ որ տէր բային ինչ կամ ով ըլլալը կը ցուցնէ. Նոյնպէս է հետեւեալ օրինակներուն մէջ ։

Նոքա եղիցին ձեր դատաւորք. Անոնք ձեր դատաւորներն ըլլան.

Հոս ալ դատաւորք ուղղական խնդիր է ։

Եւ էր այր մեծատուն. Ան մարդը հարուստ էր.

Հոս ալ մեծատուն բառն է ուղղական խնդիր ։

98. Աս խնդիրը կամ ստորոգելին փոխանակ ուղղական դրուելու անորոշ (առանց լի) հայցական հոլով կը դրուի, երբ փոխանակ տէր բային վերաբերելու՝ հայցական բառի մը կը վերաբերի. զոր օրինակ.

Կոչեցի զձեզ բարեկամս. Ձեզ բարեկամ կոչեցի.

Հոս բարեկամս ստորոգելին հայցական դըր-

ուած է՝ ԶՔԵԶ-ին վերաբերելուն համար ։

Ո՞ կացոյց զՔԵԶ ԴԱՏԱՒՈՐ. Քեզ ո՞վ դատաւոր դրաւ ։

Հոս ալ ԴԱՏԱՒՈՐ ստորոգելին հայցական է՝ ԶՔԵԶ-ին վերաբերելուն համար ։

Դու զո՞ առնես զՔԵԶ. Դու զքեզ ո՞վ կը կարծես.

Հոս ալ ԶՈ՞ ստորոգելին հայցական է՝ ԶՔԵԶ-ին վերաբերելուն համար ։

99. Հայցական խնդիր ։ Հայցական կամ սեռի խնդիր կ՚ըսուի այն հայցական հոլովը զոր ներգործական բայերը կ՚ունենան, և տէր բային ըրածն է. զոր օրինակ.

Աստուած արար զԵՐԿԻՆՍ և զԵՐԿԻՐ. Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց.

Աս խօսքին մէջ զԵՐԿԻՆՍ, զԵՐԿԻՐ բառերը սեռի խնդիր են, քանզի տէր բային, այսինքն Աստուծոյ ըրածը կը ցուցնեն ։

Առաքեաց զՈՐԴԻ ԻՒՐ. Իր որդին ղրկեց.

100. Սեռի խնդիրը դիւրաւ կը գտնուի սա հարցումն ընելով. զո՞վ կամ ԻՆՉ բանը. զոր օրինակ. —Աստուած ստեղծեց. —Ի՞նչ բանը. —Երկինքն ու երկիրը—. —Ղրկեց —զո՞վ. Իր որդին. ապա ԵՐԿԻՆՍ ու ԵՐԿԻՐ, ԻՒՐ ՈՐԴԻՆ, սեռի խնդիր են ։

101. Ուրիշ հոլով խնդիրներ ։ Բայերը, սեռական, բացառական և գործիական հոլով խնդիրներ ալ կ՚ունենան, որոնց բնութեան խնդիր կ՚ըսուի. զոր օրինակ.

*Թող մեզ զպարտիս մեր. Մեր յանցանքները մեզի թող.*

*Հոս մեզ տրական հոլով ընութեան խնդիր է Թող բային :*

*Եղբարքն Յովսեփու վաճառեցին զնա Իսմայելացւոց. Յովսեփին եղբայրներն անիկա իսմայելացւոց ծախեցին.*

*Հոս ալ Իսմայելացւոց տրական հոլով խնդիր է վաճառեցին բային :*

102. *Տրական հոլովը ո՞ւմ, քիմէ. հարցման պատասխան է. զոր օրինակ. —Ծախեցին. որո՞ւն. —Իսմայելացւոց—. ապա Իսմայելացւոց տրական խնդիր է վաճառեցին բային :*

*Փրկեա զմեզ 'ի չարէ. Մեզ չարէ փրկէ.*

*Աս խօսքին մէջ ալ 'ի չարէ բացառական հոլով ընութեան խնդիր է Փրկեա բային :*

103. *Բացառական հոլովը Ուստի՞ հարցման պատասխան է. զոր օրինակ. —Փրկէ. —որմէ. —Չարէ.*

*Բերէին զհիւանդս մահճօք. Հիւանդներն անկողիններով կը բերէին.*

*Աս խօսքին մէջ ալ մահճօք գործիական հոլով ընութեան խնդիր է բերէին բային :*

104. *Գործիական հոլովը՝ որո՞վ, ի՞նչ բանով հարցման պատասխան է. զոր օրինակ. —Հիւանդները կը բերէին. —ի՞նչ բանով. —մահիճներով :*

105. Նախադրութեամբ խնդիրներ ։ Խօսքի մը մէջ, տրական, բացառական և գործիական հոլով խնդիրներէն զատ, նախադրութեամբ խնդիրներ ալ կրնան գտնուիլ. զոր օրինակ.

Ածին զՅիսուս առ Պիղատոս.

Հոս — առ Պիղատոս՝ — նախադրութեամբ խնդիր է ածին բային.

Ընկեցին զԴանիէլ ՚ի գուբն առիւծուց. Դանիէլն առիւծներուն գուբը նետեցին.

Հոս ալ ՚ի գուբն՝ ՚ի նախադրութեամբ խնդիր է ընկեցին բային ։

Կացոյց զնա ՚ի վերայ աշտարակի տաճարին. Անիկա տաճարին աշտարակին վրայ կեցուց ։

Հոս ալ ՚ի վերայ աշտարակի՝ ՚ի վերայ նախադրութեամբ խնդիր է կացոյց բային ։

## Դ. ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ

106. Սեռական հոլով խնդիր ։ Գոյականները շատ անգամ սեռական հոլով խնդիր մը կ՚ունենան, որ յատկացուցիչ կ՚ըսուի, և բան մը որուն ըլլալը կ՚իմացնէ. զոր օրինակ, վերի օրինակին մէջ —՚ի վերայ աշտարակի տաճարին. տաճարին աշտարակին վրայ, — տաճարին սեռական հոլովն՝ աշտարակ բառին յատկացուցիչն է, քանզի աշտարակը որուն ըլլալը կ՚իմացնէ, այսինքն՝ տաճարին ։

Ես զկամս նորա առնեմ. Ես անոր կամքը կ՚ընեմ ։

Հոս ալ նորա սեռական հոլով դերանունը՝ կամք բառին յատկացուցիչն է, քանզի կամքը որուն ըլլալը կը ցուցնէ, այսինքն՝ անոր (Աստուծոյ):

107. Ան բառը որ յատկացուցիչ մ'ունի՝ Յատկացեալ կ'ըսուի. ուստի վերի օրինակներուն մէջ աշխարհ և կամք բառերը յատկացեալ էին:

108. Յատկացուցիչը, այսինքն սեռական հոլովը՝ որուն, ինչ բանին հարցման պատասխան է:

109. Բայէն և գոյականէն զատ, խօսքի մէջ ածականներէն ոմանք ու նախադրութիւններն ալ այլ և այլ հոլով խնդիր կ'առնեն:

Խնդիր առնող ածականներ: Արժանի վարձուց. Հնազանդ հրամանաց. Հմուտ օրինաց. Թափուր 'ի բնակչաց. Ազատ 'ի հարկաց. Լի դրամովք. Կարօտ հացի.

Աս օրինակներուն մէջ՝ վարձուց, հրամանաց, օրինաց, սեռական հոլովները՝ արժանի, հնազանդ, հմուտ ածականներուն խնդիր են. 'ի բնակչաց, 'ի հարկաց, բացառական հոլովներն ալ՝ թափուր, ազատ, ածականներուն խնդիր են. դրամովք, հացի, գործիական հոլովներն ալ՝ լի, կարօտ, ածականներուն:

110. Նախադրութեանց խնդիրները: Ամեն նախադրութիւն գոյական կամ դերանուն խնդիր մը կ'ունենայ:

111. 'ի. յ, առ, ց. ընդ, ըստ, նախադրութիւններն այլ և այլ հոլով խնդիր կ'առնեն, և տարբեր նշանակութիւն կ'ունենան:

112․ 'ի կամ յ նախադրութիւնը շատ անգամ տեղւոյ պարագան կը ցուցնէ․ և ո՛ւր հարցման պատասխան է, որ օրինակ․ — Գնաց 'ի տուն․ Ո՞ւր գնաց․ 'ի տուն։ Նստի 'ի տան․ Ո՞ւր կը նստի․ 'ի տան, տունը։

113․ Երբ բայը դադարում կը ցուցնէ, 'ի կամ յ նախադրութիւնը տեղ ցուցած ատենը, եզակի անունը տրական կ'ուզէ, և ներգոյական կ'ընդունի։

Բնակէ 'ի քաղաքի․ Նստի 'ի տան․ Կայր 'ի տաճարին։

114․ Երբ բային գործողութիւնը շարժում կը ցուցնէ, նոյն նախադրութիւնը տեղ ցուցած ատենը՝ եզակի անունը անորոշ հայցական կ'ուզէ, և նախդրիւ տրական կ'ընդունի․ որ օրինակ․

Զոքաւ 'ի տուն․ Առաքեաց 'ի քաղաքն․ Ընթացաւ 'ի հրապարակն։

115․ Իսկ երբ խնդիրը յոքնակի կամ չորրորդ հոլովման (գետ, գետոյ) բառ է, 'ի կամ յ էն ետքը միշտ անորոշ հայցական կը դրուի․ որ օրինակ․

Գնացին 'ի տունս իւրեանց․ Բնակին յանտառս․ Անկաւ 'ի գետն․ Հեղձաւ 'ի գետն։

116․ Զ նախդիրը բացառական խնդրով՝ բանի մը վրայով կը նշանակէ և պատմական կ'ընդունի․ որ օրինակ․

Պատմեն զնմանէ․ անոր վրայով կը պատմեն․

Ասացաւ զմանկանէն · տղուն վրայօք ըսուեցաւ :

117. Զ գործիական խնդրով՝ բանի մը բոլորտիքը կը նշանակէ և պարագական կ'ըսուի · զոր օրինակ ·

Խռնեցան զնովաւ · անոր բոլորտիքը ժողվուեցան · Պատեսցեն զքեւ պատնէշ · քու բոլորտիքդ պատ պիտի քաշեն ·

118. Ընդ՝ եզակի տրական և յոգնակի հայցական խնդրով՝ մէկուն հետը կը նշանակէ · զոր օրինակ ·

Խօսեցաւ ընդ նմա · անոր հետ խօսեցաւ · Խօսեցաւ ընդ նոսա · անոնց հետ խօսեցաւ :

119. Ընդ՝ սեռական խնդրով տեղը, փոխանակ, կը նշանակէ · զոր օրինակ ·

Թագաւորեաց Ռոբովամ որդի նորա (Սողոմոնի) ընդ նորա · Անոր (Սողոմոնին) որդին Ռոբովամ անոր տեղը թագաւորեց :

120. Ընդ՝ գործիական խնդրով տակը կը նշանակէ · զոր օրինակ ·

Ընդ թեւովք · թեւերուն տակը · Ընդ իշխանութեամբ · իշխանութեան տակ :

121. Ուրիշ նախադրութիւններէն ալ ոմանք սեռական կ'ուզեն, զոր օրինակ, առաջի, շնորհի, յետ, 'ի վերայ, ոմանք տրական՝ ոմանք բացառական, ոմանք գործիական :

## Ե· ԲԱՑԱՅԱՅՏԻՉ

122. Երբեմն խօսքի մէջ բառի մը քով

ուրիշ բառ մը կը դրուի որ մի և նոյն բանը կը նշանակէ և անոր մեկնութեան պէս է . զոր օրինակ .

Յովսէփ , այր Մարեմայ ։ Յովսէփ , Մարիամին այրը ։

Հոս , այր Մարեմայ՝ բացայայտիչ է Յովսէփին , քանզի անոր մեկնութեան պէս է , այսինքն ո՛ր Յովսէփին ըլլալը կը ցուցնէ ։

փախուստն Անակայ , հօր որբոյն Գրիգորի . Սուրբ Գրիգորին հօրը , Անակայ փախուստը ։

Հոս ալ հօր որբոյն Գրիգորի բառերն՝ Անակին բացայայտիչ են ։

Զմայրն ամենայն առաքինութեան , զխոնարհութիւն , չունէր յանձին . Ամեն առաքինութեանց մայրը , խոնարհութիւնը , չունէր .

Հոս ալ խոնարհութիւն բառը՝ մայր ամենայն առաքինութեանց ին բացայայտիչ է ։

Կռոց և դրօշելոց հանգամանք առ Թարայիւ , հարբ Աբրահամու , եղեն . Քարէ և փայտէ արձաններ (կուռքեր) շինելը՝ Աբրահամին հօրը Թարային ատենը սկսաւ ։

Հոս ալ հարբ Աբրահամու բառերը՝ Թարայ ին բացայայտիչն են ։

### ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

123. Յարաբերական դերանունը որ բառն է , և խօսքին մէջ իրմէ առաջ գտնուած բառ մը կը ցուցնէ . զոր օրինակ .

Հայրն քո որ տեսանէ 'ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս. Քու հայրդ՝ որ ծածուկ կը տեսնէ, յայտնի պիտի հատուցանէ.

Այս խօսքին մէջ որ յարաբերական դերանուն է, և հայր բառին տեղ դրուած է, կամ հայր բառը կը յարաբերէ։

Աստղն զոր՝ տեսին յարևելս՝ առաջնորդեաց նոցա. Աստղը՝ որ արևելք տեսան, անոնց առաջնորդեց։

Այս խօսքին մէջ ալ որ յարաբերական դերանունը՝ աստղ բառը կը յարաբերէ.

124. Յարաբերականին յարաբերած բառը յարաբերեալ կը կոչուի. ուստի վերի խօսքերուն մէջ հայր և աստղ բառերը յարաբերեալ են։

125. Յարաբերականը կարելի եղածին չափ յարաբերեալին անմիջապէս քովը պիտի դրուի։

126. Դերանուն յարաբերեալը շատ անգամ զօրութեամբ կ'իմացուի. զոր օրինակ.

Որ ետեսն զիս՝ ետես զհայր իմ.

Այս խօսքին մէջ յարաբերեալը զօրութեամբ կ'իմացուի, որ է նա դերանունը. ուստի պիտի ըլլայ. — Նա որ ետես զիս՝ ետես զհայր իմ. Ան որ իս տեսաւ՝ հայրս տեսաւ։

Որք ոչն տեսանեն՝ տեսցեն, և որք տեսանենն կուրասցին։

Հոս ալ յարաբերեալը զօրութեամբ կ՚իմացուի. այսինքն՝ — Նոքա որ ոչ տեսանեն՝ տեսցեն, և Նոքա որ տեսանեն՝ կուրասցին. Անոնք որ չեն տեսներ՝ պիտի տեսնեն, իսկ անոնք որ կը տեսնեն՝ պիտի չտեսնեն:

127. Երբ յարաբերեալն այսպէս զօրութեամբ է՝ յարաբերականէն անմիջապէս ետքը եկող բառին վրայ ա, դ, ն, գիրերէն մէկը կը դրուի. այսինքն՝ ա կը դրուի՝ երբ զօրութեամբ իմացուած դերանունը՝ այս, սա կամ ես դերանուններէն մէկն է. դ կը դրուի՝ երբ զօրութեամբ իմացուած դերանունը՝ այդ, դա կամ դու դերանուններէն մէկն է. ն կը դրուի՝ երբ զօրութեամբ իմացուած դերանունը այն կամ նա դերանուններէն մէկն է. զոր օրինակ.

Մի ոք մեղադիր լիցի և աղարտիցէ զոր ասեմս:

Փոխանակ ըսելու՝ —Մի ոք մեղադիր լիցի և աղարտիցէ զայս զոր ասեմ:

Գիտիցե՞ս արդեօք զոր ընթեռնուցուսդ.

Փոխանակ՝ — Գիտիցե՞ս արդեօք զայդ զոր ընթեռնուս:

Ոչ կարեմք զոր տեսաքն և լուաք չխօսել.

Փոխանակ՝ — Ոչ կարեմք չխօսել զայն զոր տեսաք և լուաք:

128. Առանց յարաբերեալի յարաբերական դերանունը դիմաւոր բայով մէկտեղ՝

աշխարհաբարի մէջ ող կամ ած վերջաւորած բառերուն զօրութիւնն ունի. ուստի՝

Որ երեւան չէ, կը նշանակէ՝ Ձիս տեսնողը։ Որք ոչն տեսանեն, կը նշանակէ՝ Զտեսնողները։ Մի՛ ոք աղարտիցէ զոր ասեմ, կը նշանակէ՝ Բնաւ մէկը չը պարսաւէ։ Գիտիցե՞ս զոր ընթեռնուցուս, կը նշանակէ՝ Կարդացածդ գիտե՞ս։ Ոչ կարեմք զոր տեսաքն եւ լուաք չխօսել, կը նշանակէ՝ Չենք կրնար տեսածնիս եւ լսածնիս չխօսիլ։

129. Այս կերպ գրուցուածներու մէջ, եթէ հարկ ըլլայ, յարաբերականը զօրութեամբ իմացուած յարաբերեալին հոլովը կը դրուի. զոր օրինակ.

Որում խնդրէ 'ի քէն՝ տուր. Քենէ խնդրողին տուր.

փոխանակ ըսելու՝ —Տուր այնմ՝ որ խնդրէ 'ի քէն։

# ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

## ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

130. Խօսք մը կազմելու, կամ իմաստ մը հասկցնելու համար բառերուն իրարու քով շարուելուն՝ Շարադրութիւն կ'ըսուի։

131. Խօսք մը շարադրելու կամ բառերը շարելը երկու կերպով կ'ըլլայ. Պարզ եւ Ձեւաւոր։

132. Պարզ շարադրութիւն ան է ուր բառերը քերականական կարգով շարուած են։

133. Բառերը քերականական կարգով շարելը հետեւեալ կերպով կ՚ըլլայ.

Նախ պէտք է Տէր բային գտնել իր մասերովը, այսինքն՝ ածականներովն ու յատկացուցչովը:

Երկրորդ՝ Բայը:

Երրորդ՝ Մակբայը, եթէ մակբայ կայ:

Չորրորդ՝ Հայցական սեռի խնդիրն իր մասերովը, եթէ բայը ներգործական է և հայցական հոլով սեռի խնդիր ունի:

Հինգերորդ՝ Միւս խնդիրները, այսինքն՝ տրական, բացառական, գործիական և նախադրութեամբ խնդիրներն իրենց մասերովը. զոր օրինակ.

Նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի որ արար հարսանիս որդւոյ իւրում, և առաքեաց զծառայս իւր կոչել զհրաւիրեալսն ՚ի հարսանիսն, և ոչ կամեցան գալ: Դարձեալ առաքեաց այլ ծառայս և ասէ. Ասացէք հրաւիրելոցն. ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի, զուարակք իմ պարարակք զենեալ են, և ամենայն ինչ պատրաստ է, եկայք ՚ի հարսանիսս: Եւ նոքա յուլացեալ գնացին, ոմն յագարակ իւր, և ոմն ՚ի վաճառս իւր: Եւ այլք կալան զծառայս նորա, թշնամանեցին և սպանին: Իսկ թագաւորն իբրև լուաւ, բարկացաւ, և առաքեաց զզօրս իւր և սատակեաց զսպանողսն զայնոսիկ, և զքաղաքս նոցա այրեաց: Յայնժամ ասէ ցծառայս իւր. Հարսանիքս պատրաստ են, և հրաւիրեալքն չէին արժանի. արդ՝ երթայք

յանցս ճանապարհաց, և ողբս մեղմագոյն փոխանիցէ՛ հե-ծեցէ 'ի հարսանիս: Եւ ելեալ ծառայքն 'ի ճանապարհս՝ ժողովեցին զամենեսեան զորս և գտին, զչարս և զբարիս, և լցան հարսանիքն բազմականօք: Եւ մտեալ թագաւորն հայել զբազմականօքն՝ ետես անդ այր մի որ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց. և ասէ ցնա. ընկեր, զիա՞րդ մտեր այր, զի ոչ ունէիր հանդերձ հարսանեաց. և նա պապանձեցաւ: Յայնժամ ասէ թագաւորն ցսպասաւորսն. Կապեցէք զոտս նորա և զձեռս, և հանէք զդա 'ի խաւարն արտաքին, անդ եղիցի լալ և կրճ-ճել ատամանց:

Այս հատուածին մէջ շարադրութեան կարգը քերականական է, բաց 'ի նօսր դրոյ նշանակուած մասերէն որոնց կարգը ձեւաւոր է:

134. Զեւաւոր կարգը երեք է. մէյմը՝ ուղղուն, այսինքն՝ երբ բառերը քերականական կարգէն տարբեր կարգով շարուած են. զոր օրինակ, Տէր Յոյն բայէն առաջ դրուելու տեղ՝ բայէն վերջը դրուի. կամ խնդիր մը խնդրառուէն ետքը դրուելու տեղ՝ անկէ առաջ դրուի, զոր օրինակ. յանկացուցիչը յանկացեալէն առաջ: Վերի հատուածին մէջ՝ Նմանեցաւ արքայութիւն երկնից խօսքը՝ ուղղուն է, քանզի տէր Յոյն բայէն վերջը դրուած է: Զճաշ իմ պատրաստեցի խօսքն ալ շրջուն է, քանզի հայցական խնդիրը նոյնպէս խնդրառուէն, այսինքն՝ պատրաստեցի բայէն առաջ դրուած է:

Նկատեցէք [illegible] խօսքն ալ շրջուն է, քանզի [illegible] յատկացուցիչը յատկացեալէն առաջ դրուած է: Այս ձեւը շրջադասութիւն կամ [illegible] կը կոչուի:

135. Երկրորդ՝ ձեւաւոր է կարգը երբ խօսքին մէջ բառ մը զեղջուած է, այսինքն՝ զօրութեամբ կ'իմացուի. զոր օրինակ, վերի հատուածին մէջ՝ —Ոմն յագարակն իւր և ոմն 'ի վաճառն իւր— խօսքը զեղջուած է, քանզի գնաց բայը զօրութեամբ կ'իմացուի, ուստի պէտի ըլլայ՝ —Ոմն գնաց յագարակ իւր և ոմն գնաց 'ի վաճառ իւր—: Այս ձեւը զեղջում կ'ըսուի:

136. Երրորդ՝ ձեւաւոր է շարադրութեան կարգը՝ երբ խօսքին մէջ բառ մը, զոր օրինակ՝ տէր բային կամ խնդիր մը, աւելի է. զոր օրինակ.

Կինն զոր ետուր ընդ իս՝ նա ետ ինձ 'ի ծառոյ անտի և կերայ. ինծի տուած կինդ՝ ան տուաւ ինծի ծառէն ու կերայ.

Հոս նա աւելորդ է:

զՅիսուս զոր դուք սպանիք՝ զնա յարոյց Աստուած:

Հոս ալ զնա աւելի դրուած է: Այս ձեւն աւելադրութիւն կը կոչուի:

## ԿԷՏԱԴՐՈՒԹԻՒՆ

1. Կէտադրութիւն կը կոչուի խօսքին մէջ բա-

ռեր և իմաստներ կէտ կոչուած նշաններով իրարմէ զատելու արուեստը։

2. Կէտադրութեան գլխաւոր նշանները հետեւեալներն են. բութ ('), ստորակէտ (,), միջակէտ (.) և վերջակէտ (:)։

3. Այս նշանները կը գործածուին խօսք մը և կամ Պարբերութիւն մը մասերն իրարմէ զատելու համար։

4. Խօսքն ան է որ գլխաւոր բայ մը ունի, և խօսքին մասերն են՝ Տէր բային, խնդիրները, մակբայը, ածականներ եւայլն։

5. Պարբերութիւն կ'ըսուի երկայն գրուած մը որ կը բաղկանայ երկու գլխաւոր խօսքէ որոնք պարբերութեան անդամները կը կոչուին։

6. Պարբերութեան անդամները՝ կամ իրարմէ կախում ունեցող կամ իրարու հակադրեալ խօսքեր են, և կամ մէկը միւսին պատճառն է։ Զոր օրինակ։

Եթէ մեզի մեր տկարութեանը վրայ գաղափար տուող բան մը կայ, մեր ծննդենէն անմիջապէս ետքը մեր գտնուած վիճակն է։

Երջանկութեան հասնելու համար բոլոր մարդիկ հարստութիւն կը փնտռեն. բայց և այնպէս երջանիկ հարուստներ շատ քիչ կը գտնուին։

Մեր Թագաւորը բարեսիրտ և մարդասէր է. ապա անոր գթութեանը կրնանք պաղատիլ։

Այս պարբերութեանց առաջինին անդամ-

ները կախում կը ցուցնեն . երկրորդին անդամներն իրարու հակադրեալ են . իսկ երրորդին անդամներուն մէկը միւսին պատճառն է ։

7. Պարբերութիւն չէ երկայն գրուած մը՝ որուն մէջ խօսքերն իրարմէ կախում չունին, ոչ իրարու հակադրեալ են, ոչ ալ մէկը միւսին պատճառն է, այլ միայն իրարու քով շարուելով ընդհանուր իմաստ մը կը բացատրեն . զոր օրինակ .

Առողջութիւնը լոկ անուն է . կեանքը սուտ երազ է . փառքը մինակ երեւոյթ մըն է . զուարճութիւններն ու հեշտութիւնները միայն վտանգաւոր զբօսանք են ։

8. Պարբերութիւն մը պարզ կը կոչուի, երբ անդամներուն երկուքն ալ մէյմէկ խօսք են . ինչպէս վերի երեք պարբերութիւնները ։

9. Պարբերութիւն մը բաղադրեալ կը կոչուի, երբ անդամներուն մէկը կամ երկուքն ալ երկու կամ աւելի խօսքերէ կը բաղկանան . զոր օրինակ .

Եթէ մարդկիկ արդարութեան վրայ աւելի յարգ ունենային՝ և ճշմարտութեան մեծ զօրութեանը վրայ համոզուած ըլլային, ոչ միայն ընկերութիւնն իր նպատակին աւելի մօտեցած կ՚ըլլար՝ այլև առանձնական շահերն աւելի ապահով երաշխաւորութիւն մը ունեցած կ՚ըլլային ։

10. Կէտադրութեան կանոնները հետեւեալներն են .

Ա. Երբ խօսք մը քանի մը տէր բայի կամ խնդիր, կամ երբ գոյական մը խօսքին մէջ քանի մըածականներ ունի, ասոնք իրարմէ ստորակէտով կը բաժնուին. զոր օրինակ.

Աշխարհիս վրայ հող, խոնաւ, ջերմ, ցուրտ, լոյծ, ծիրբեւէ բաներ խառն կը գտնուին:

Նենգաւորները, խաբեբաները, ստերդմնողները, գողերը, զրպարտիչներն ան երկրին մէջ իրենց ձայնը լսել չեն տար:

Նոյնպէս երբ տէր բայի մը շատ բայեր ունի, զոր օրինակ.

Աս փիլիսոփան ուրախութեամբ կը խոստովանէր թէ հոգին կ'ըմբռնէ, կը խորհի, կը տարակուսի, կը հաւատայ, կ'իմաստասիրէ, կը ճանչնայ, կը կամի, կը խորհրդածէ:

Ոմանք աս դէպքերուն մէջ ստորակէտի տեղ բութ կը գործածեն:

Բ. Պարբերութիւն չեղող գրուածքի մը մէջ խօսքերը սովորաբար միջակէտով կը զատուին. ինչպէս որ վերի օրինակին մէջ տեսնուեցաւ:

Գ. Պարզ պարբերութեան մը իրարմէ կախում ցուցնող անդամներն իրարմէ ստորակէտով կը զատուին:

Դ. Պարզ պարբերութեան մը անդամները որոնք իրարու հակադրեալ են, կամ մէկը միւսին պատճառն է, միջակէտով կը զատուին:

Ե. Բաղադրեալ պարբերութեան մը ան-

դամները որոնք կախում կը ցուցնեն, նոյնպէս ստորակէտով կը զատուին. իսկ իւրաքանչիւր անդամը կազմող մասերը բութով կը զատուին ։ Ասոնց օրինակները տես վերը ։

Զ. Բաղադրեալ պարբերութեան մը անդամները որոնք իրարու հակադրեալ են, կամ մէկը միւսին պատճառն է, վերջակէտով կը զատուին. իսկ իւրաքանչիւր անդամը կազմող մասերը միջակէտով կը զատուին, զոր օրինակ.

Մարդ իրեն հետ համամիտ և համակարծիք եղողներուն հետ երկայն ատեն զժտեալ չի կրնար մնալ. վերջապէս կը հաշտուի ։ Բայց իր զգացմանցն ու կարծեացը հակառակ զգացում ունեցողներուն հետ սիրով ու միաբանութեամբ ըլլալու վայրապար կ'աշխատի. ասանկները կանուխ կամ անագան իրարմէ կը բաժնուին ։

Է. Կոչականը խօսքին միւս մասէն ստորակէտով կը բաժնուի, նոյնպէս ասէ, ասէն, և ուրիշ ասոնց նման խօսք մը որ ուրիշի մը խօսքը յառաջ կը բերէ, և ան խօսքին մէջ է, ստորակէտով կը բաժնուի. զոր օրինակ.

Ով արժանաւոր որդիդ իմաստնոյն Ոդիսեայ, հօրդ զգօնութիւնը քու վրադ կը տեսնեմ.

Ով է, ըսաւ դիցուհին, հայրդ՝ զոր կը փնտռես։ Ոդիսեւս կը կոչուի, ըսաւ Տելեմաք ։

Աս վերջի դէպքին մէջ, ասէ, ասէն եւայլն խօսքերէն. ետքը միջակէտ կը դրուի և յա-

ջորդ խօսքը որ ուրիշինն է՝ գլխագրով կը սկսի, եթէ յիշեալ բայերը յաջորդ խօսքէն առաջ են. զոր օրինակ.

Դիցուհին ըսաւ. Ով է հայրդ զոր կը փնտռես: Տէլեմաք պատասխան տուաւ. Հայրս Ոդիսեւս կը կոչուի եւ այլն:

11. Ամենեւին կէտադրանշանով չեն բաժնուիր,

Ա. Երկու նոյնատեսակ բառ, զոր օրինակ՝ երկու ածական, երկու տէր բայի, երկու բայ որոնք մի և նոյն գոյականի, բայի և տէր բայի կը վերաբերին, և, ու, կամ, բայց և ուրիշ ասոնց նման շաղկապներով կապուած են, ու յարակից մասեր չունին. զոր օրինակ.

Պատիժն ու մրցութիւնն անբաժին են: Բոլորտիքդ եղողներուն կորուստը կամ փրկութիւնը քու կորստենէդ կամ փրկութենէդ կախում ունի: Մարդուս կիրքերն անոր վնասակար բայց սիրելի թշնամիներն են:

Բ. Կրկնուած շաղկապներով կամ մակբայներով կապուած խօսքեր. զոր օրինակ.

Ամեն տեղ ծաղկած կը տեսնենք թէ Պոմոնային պտուղները թէ Փլորային ընծաները: Մի թողուր ոչ ագահութեան ոչ հպարտութեան որ քեզ քարշ ածեն:

Գ. Ոչ, թէ, շաղկապներով կապուած խօսք

մը որ նախընթաց բային խնդիր է, զոր օրինակ.

Չենք ուզեր որ մէկը մեզ յանդիմանէ, քանզի ուղղուիլ չենք ուզեր։ Շողոքորթութենէ կը խաբուինք, քանզի կը կարծենք թէ ուրիշներն այնչափ կոյր են, որ մեր մոլութիւնները չեն տեսներ։

12. Պարոյկը (˚) հարցական նշան է, և հարցում եղող բառին վրայ կը դրուի։

13. Երկարը (՛) զարմացական նշան է, և հոգւոյն մէկ կիրքը նշանակող բառերու վըրայ կը դրուի։

14. Կախոցը որ երեք կէտ է (. . .), կը գործածուի խօսքը պակաս կամ կիսկատար մնացած ըլլալը ցուցնելու համար։

15. Գիծը (—) կը գործածուի մէյմը հարցման ու պատասխանւոյ մէջ տեղը, առանց կ՚ըսէ, ըսաւ, պատասխան տուաւ, հարցուց խօսքերը գործածելու. Երկրորդ՝ փակագծի տեղ։

16. Չակերտը (») կոչում եղող խօսք մը նշանակելու համար կը գործածուի։

17. Փակագիծը որ սա նշանն է (), խօսքին մարմինէն դուրս բայց անոր յաւելուած մաս մը բուն խօսքէն կը զատէ։

ՎԵՐՋ

2527

2073

<< Ազգային գրադարան >>

NL0061510